

ԷՐՏՈՂԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՎ ՍԱՐՔՈՋԻ Կ'ԱԶԱԿՑԻ ՀԱՅԵՐՈՒՆ

Թուրքիոյ վարչապետ Ռե-
ջէփ Թայիբ էրտողան յայտարար-
ած է, թէ Ֆրանսայի նախագահ
Նիքոլա Սարքոզի Լեռնային Ղա-
րաբաղի հարցով բացայայտ կեր-
պով կ'աջակցի հայերուն:

«Մի քանի ամիս առաջ
Ֆրանսայի նախագահ Նիքոլա
Սարքոզի Հայաստան այցելեց, եւ
եթէ լսած էք, այնտեղ կատարած
անոր յայտարարութիւնը, ապա
կասկած պէտք չէ ունենաք, որ ան
բացայայտ կերպով պաշտպանեց
հայերուն եւ այդպիսով իր աջակ-
ցութիւնը յայտնեց հակամարտու-
թեան կողմերէն մէկուն», - ասոր-
պէջճանական ANS հեռատեսիլի
ալիքի հետ զրոյցի ընթացքին
յայտարարած է էրտողան եւ
աւելցուցած, - «Բնականաբար, այդ
ամէնէն ետք, Ֆրանսան պէտք է
դուրս գայ ԵԱՀԿ Մինսկի խումբի
(ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսա) կազ-
մէն»:

էրտողանի կարծիքով, Ֆրան-
սա այլեւս չի կրնար վստահելի
միջնորդի դերով հանդէս գալ:

էրտողան նաեւ ըսած է, թէ
բոլորը այժմ կը սպասեն հակա-
մարտութեան լուծման. «Յոյսով
ենք, որ որոշում կ'ընդունուի եւ
բոլոր անյաջողութիւնները անց-
եալին կը մնան»:

Թուրքիոյ վարչապետը ընդգ-
ծած է, որ Ատրպէյճանն ու Թուրք-
իան միշտ պէտք է կողք-կողքի
ըլլան՝ ամէն հարցով: «Ինչպէս



Թուրքիոյ վարչապետ
Ռեջէփ Թայիբ էրտողան

կ'ըսէր մեծն առաջնորդ Հէյտար
Ալիեւ ըսած է՝ մենք մէկ ժողո-
վուրդ ենք երկու պետութիւններու
մէջ եւ միասին երթանք դէպի
պայծառ ապագայ», - աւելցուցած է
էրտողան:

Նոյն հարցազրոյցի ընթաց-
քին էրտողան անգամ մը եւս
պնդած է, որ Յեղասպանութեան
հարցով նախագահներն ու խորհր-
դարանները չէ որ պէտք է գբաղին:

«Հայկական Սփիւռքէն հնչող
մեղադրանքները մենք բնականա-
բար չենք ընդունիր: Մենք բա-
ցած ենք մեր արխիւները եւ
կրկին նոյն բանը կ'ըսենք. հարցի
մասին դատողութիւններ պէտք է
ընեն պատմաբանները, այլ ոչ թէ
խորհրդարաններն ու քաղաքական
գործիչները»:

ՀՐԱԶՂԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՏԻՐԱՊԵՏԱԾ Է ԿԱՇՈՒՔԸ

Փետրուար 12-ին Հայաստա-
նի տարբեր համայնքներուն մէջ
տեղի ունեցան տեղական ընտրու-
թիւններ, որոնց ընթացքին դարձ-
եալ յաղթական դուրս եկան իշխող՝
Հանրապետական կուսակցութեան
թեկնածուները:

Ուշադրութիւնը ամենէն աւելի
կեդրոնացած էր Հրազդան քաղա-
քի քաղաքապետի ընտրութիւննե-
րուն վրայ: Արդարեւ, Մայիսին
կայանալիք խորհրդարանական
ընտրութիւններէն առաջ, քաղա-
քական շրջանակներուն համար
Հրազդանի ընտրութիւնները առա-
ջին փորձն էր, տեսնելու համար
թէ, որքանով պիտի իրականանան
ազատ եւ արդար ընտրութիւններ
կազմակերպելու իշխանութիւննե-
րու խոստումները:

Հրազդանի մէջ իրար դէմ կը
պայքարէին նախկին քաղաքական
բանտարկեալ, ընդդիմադիր թեկ-
նածու Սասուն Միքայէլեան եւ
այժմու քաղաքապետ՝ Հանրապե-
տական կուսակցութեան անդամ
Արամ Դանիէլեան:


Ընտրութեան օրուայ աւար-
տին յայտնի դարձաւ, որ ՀՀԿ-ի
թեկնածուն յաղթած է 1600 ձայ-
ներու առաւելութեամբ: Պաշտօ-
նական տուեալներով ընտրութիւն-

ներուն մասնակցած է 25 հազար
477 ընտրող, կամ ընտրողներու
ընդհանուր թիւի 58 տոկոսը: Արամ
Դանիէլեանի օգտին քուէարկած է
13 հազար 79 ընտրող, իսկ Սասուն
Միքայէլեան ստացել է 11 հազար
506 ձայն:

Մինչ ընտրութիւնները կ'ըն-
թանային, ինթըրնետային կայքե-
րու վրայ տեղադրուած էր
տեսագրութիւն մը, ուր կին մը
ներկայացած էր ընտրական տեղա-
մաս, բողոքելու համար որ իր
ապրած շէնքի բոլոր բնակիչները
ստացած են հինգ հազար դրամ,
իսկ իրեն բաժին չէ հասած: Ան
կը յայտնէր թէ ինք պիտի
քուէարկէ ի նպաստ Արամ Դանի-
էլեանի:

Սասուն Միքայէլեանի նա-
խընտրական շտաբի պետ՝ Յակոբ
Աւագումեան մամուլին յայտնեց,
թէ իրենք ծրագիր չունին
բողոքարկելու Հրազդանի ընտ-
րութեան արդիւնքները: «Անի-
մաստ ենք համարում, տեղամասե-
րում վերահաշուարկը. ոչ մի
փոփոխութիւն թուային առումով
չի տայ», - ըսաւ Աւագումեան եւ
աւելցուց. «Ընտրակաշառքը հա-

ՍԴՅԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑԱՆ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԴԵՍՈԿՐԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ



ՀԱԽ-ի պատուիրակու թեան անդամներ Նահանգային Խորհրդարանի
խօսնակ ձոն Փերեզի հետ

ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խոր-
հուրդի (ՀԱԽ) եւ «Կայծ» երիտա-
սարդական միութեան անդամնե-
րէն բաղկացած պատուիրակու-
թիւն մը մասնակցեցաւ Քալի-
ֆորնիոյ Դեմոկրատական կուսակ-
ցութեան Համագումարին, որ տեղի
ունեցաւ Փետրուար 10-12 շաբա-
թավերջին, Սան Տիէկոյի Համա-
գումարներու Կեդրոնէն ներս:

Համագումարի ընդհանուր
նիստէն անկախ, ՍԴՀԿ ներկայա-
ցուցիչները իրենց մասնակցու-
թիւնը բերին աշխատանքային
տարբեր խումբերու:

Համագումարի վերջին նիս-
տին ելույթ ունեցան Նահանգի կա-
ռավարիչ ձէրի Պրատուն, ԱՄՆ Ներ-
կայացուցիչներու Տան նախկին խօս-
նակ եւ դեմոկրատ փոքրամասնու-
թեան այժմու ղեկավար Նէնսի
Փելոսի, Նահանգային Խորհրդարա-
նի խօսնակ ձոն Փերեզ, Քալիֆորնի-
ոյ Դեմոկրատ կուսակցութեան ատե-
նապետ ձոն Պրերթուն եւ ուրիշներ:
Համագումարի ընդհանուր

նիստէն ետք տեղի ունեցան վեր-
ջերս պաշտօնական ճանաչում ստա-
ցած՝ Քալիֆորնիոյ Ամերիկահայ
Դեմոկրատներու վարչութեան առա-
ջին ընտրութիւնները:

Քալիֆորնիոյ Ամերիկահայ
Դեմոկրատներուն մաս կը կազմեն
ՍԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը,
ՀՅԴ Հայ Դատի Յանձնախումբը,
Սան Կապրիէլ Հովիտի Ամերիկա-
հայ Դեմոկրատներու եւ Հարաւա-
յին Քալիֆորնիոյ Հայ Դեմոկրատ-
ները ներկայացնող անդամներ,
որոնք միասնաբար բողոք բարձրա-
ցուցին ամերիկեան հեռատեսիլի
յայտնի մեկնաբան, ազգութեամբ
թուրք Սէնք Ուկուրի համա-
գումարին մասնակցութեան դէմ:

Ուկուր անցեալին իր գրու-
թիւններով ժխտած էր Հայկական
Յեղասպանութեան իրողութիւնը:
Ան որպէս բանախօս ելույթ ունե-
ցաւ յառաջդիմականներու աշխա-
տանքային խումբի նիստին, խօսե-
լով ամերիկեան քաղաքական հար-
ցերու շուրջ:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ 2013-Ի ՊԻՏՏԵՆՈՎ ԿՐՃԱՏՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ

Փետրուար 13-ին Միացեալ
Նահանգներու նախագահ Պարաք
Օպամա Գոնկընթսին ուղարկեց 2013-
ի պիւտձէի նախագիծը, ուր կրճատ-
ուած է Հայաստանին յատկացուե-
լիք տնտեսական օգնութիւնը:

Օպամա 2013-ի պիւտձէի նա-
խագիծին մէջ առաջարկած է
27,219,000 տոլար տնտեսական
օգնութիւն տրամադրել Հայաստա-
նին, նախորդ տարուայ 40 միլիոն
տոլարի փոխարէն:

Միջազգային վերահսկողու-
թեան ծրագրի ծիրէն ներս Հայաս-
տանին յատկացուած է 2,824,000
տոլար եւ Առողջապահութեան հա-
մաշխարհային ծրագիրներու ծի-
րէն ներս՝ 2,500,000 տոլար օգնու-
թիւն:

Տնտեսական օժանդակութիւն

ծիրէն ներս Ատրպէյճանին առա-
ջարկուած է տրամադրել 11 միլի-
ոն տոլար, իսկ վրաստանին՝ 42
միլիոն:

Ինչ կը վերաբերի ռազմական
օգնութեան, Օպամայի վարչակազ-
մը այս տարի առաջարկած Հա-
յաստանին եւ Ատրպէյճանին հա-
մահաւասար օգնութիւն տրամադ-
րել՝ 3,3 միլիոն տոլար:

2013-ի պիւտձէի նախագիծին
մէջ խօսք չկայ Լեռնային Ղարա-
բաղին յատկացուող օգնութեան մա-
սին: Նախորդ տարիներուն Լեռ-
նային Ղարաբաղին յատկացուած
էր մօտ 2 միլիոն տոլար:

Յայտնենք որ, յառաջիկայ
տարուայ Ամերիկայի պիւտձէն
կրճատումներու ենթարկուած է բո-
լոր բնագաւառներու մէջ:

ՀԻՆ ԿՈՒԻՆ ԱԲԱՐՏՈՒԱԾ Է

ՅԱԿՈԲԱՂԱԼԵԱՆ

Սասուն Միքայելյանը փաստացի ընդունել է Հրազդանի քաղաքապետի ընտրությունների արդյունքը: Այդպես է ստացվում, երբ նրա նախընտրական շտաբի պատասխանատուները մամուլին յայտնում են, թե իմաստ չեն տեսնում ընտրությունների արդյունքը բողոքարկելու մեջ, քանի որ համատարած ընտրակաշառք է եղել, եւ տեղամասերում քուէարկությունը եղել է նորմալ, խախտումները այլ հարթույթի վրայ են տեղի ունեցել՝ ընտրակաշառք, անձնագրային անպարարություն: Իսկ ապացույցները, ըստ Միքայելյանի շտաբի, հնարաւոր չէ առանց ոստիկանության օժանդակություն:

Այդպիսով, Հրազդանի քաղաքապետի աղմուկը եւ ինտրիգային ընտրությունները փաստացի նոր նախադէպ է ստեղծում Հայաստանում՝ երբ պարտուած ընդդիմությունը հրաժարում է արդիւնքը իրաւականորէն վիճարկելու հեռանկարից:

Հասկանալի է, որ Հայաստանում այդպիսի հեռանկարի չի հաւատում որեւէ բանական մարդ: Ոչ ոք չի պատկերացնում, որ հնարաւոր է դատական կարգով ընտրությունների արդիւնք վիճարկել կամ ընտրակեղծիքի դէմ իրաւական հայց ներկայացնել, ու հասնել յաջողութեան: Թէ իրաւապահ համակարգը, թէ դատական համակարգն այդ դէպքերում հանդիսանում են ընդամէնէն իշխող քաղաքական ուժի շահը սպասարկող կառույցներ եւ իրաւական հարթույթի վրայ կատարում այն քաղաքական որոշումը, որ կը կայացնի իշխանութիւնը:

Բայց, այդ դէպքում, երբ յայտարարում են, որ չկայ բողոքարկելու հեռանկար կամ դա անյոյս է եւ իմաստ չունի, ստացվում է, որ ընտրախախտումների մասին յայտարարությունները կորցնում են իրենց ուժն ու հնչում ընդամէնէն որպէս «հերթապահ» ձեւակերպումներ, որոնք չէին կարող չլինել, որովհետեւ ընդդիմությունը ոչ մի կերպ չէր ընդունի, որ ինքը պարտուել է:

Արդեօք Հրազդանի ընտրություններից յետոյ ընդդիմադիր թեկնածուի յետընտրական պահանջները հանդիսանում է նրան սատարող Հայ ազգային կոնգրեսի հնարաւոր հետընտրական պահանջների նախերգանք: Կոնգրեսն իհարկէ ինքը պաշտօնապէս չի առաջադրել Սասուն Միքայելյանին, հետեւաբար բողոքարկման որոշումը բնականաբար կոնգրեսը չէ, որ կայացնելու է, բայց ինչպէ՞ս է վերաբերում կոնգրեսն իր սատարած թեկնածուի դիրքորոշմանը:

Արդեօք արդարացուած է դա, թէ կոնգրեսն ինքը կողմ է ընտրությունների արդիւնքը բողոքարկելուն, անկախ դրա հեռանկարից:

Չէ որ հաւանական է, որ խորհրդարանի ընտրությունները եւս մեծ դեր է խաղալու ընտրակաշառքը, առաւել եւս, եթէ ընդդիմությունը հանրությունը մոբիլիզացնող որեւէ նոր բան չառաջարկի՝ աւանդական բողոքներից, բնորոշումներից եւ քննադատություններից գատ: Այսինքն, շատ հաւանական է, որ խորհրդարանի ընտրություններն էլ ընտրակաշառքի եւ այլ տեխնոլոգիական հնարքների միջոցով ստեղծուի մի վիճակ, երբ տեղամասերում ամէն ինչ կը լինի

հանգիստ, քիչ կը լինի աղմուկը, ու կը ստացուի, որ իշխանութիւնը յաղթել է անվիճարկելի քուէարկությունների շնորհիւ:

Ի վերջոյ, ինչի՞ համար էր Հրազդանի այդ ամբողջ աղմուկը, եթէ վերջում պէտք է յայտարարուեր, որ բողոքներն անիմաստ է:

Բողոքները գուցէ իսկապէս անիմաստ է, բայց միգուցէ վաղուց արդէն անիմաստ է նաեւ կուռից առաջ բռնուցքներ թափ տալը, եթէ կուռից յետոյ պէտք է թափ տրուի ձեռքը: Միգուցէ արժէ յետաձգել այդ կուռիները, քանի դեռ չեն գտնուել դրանք վարելու նոր եւ արդիւնաւէտ մեխանիզմներ, միգուցէ արժէ մտածել իշխանութեանը նոր ոճի կուռ պարտադրելու մասին, նոր հարթույթի վրայ, նոր թիրախներով: Կարծես թէ աներկբայ է, որ հին կուռը, որ ընդդիմություններն իշխանութեան դէմ տալիս է 1995 թուականից ի վեր, ընդդիմութեան համար արդէն տանու է տրուած, հին ոճն արդէն սպառել է իրեն լիովին:

Աւելին, գուցէ թուայ պարադոքսալ, սակայն փաստ է, որ այդ հին կուռը իշխանութիւնը շատ աւելի է նորացրել իր ոճը, քան ընդդիմությունը: Խնդիրը լաւ կամ վատ նորացումը չէ, լաւ կամ վատ ոճը չէ. ընտրակեղծիքը միշտ էլ վատ ոճ է, որքան էլ նոր լինեն տեխնոլոգիաները: Բայց դրանով արդէն հարց չի լուծուում, որովհետեւ իշխանութեան ոճական «առաջադիմություններն» ընդդիմադիր դաշտը շարունակաբար պատասխանում է գրեթէ միեւնոյն ինտրուկտիւմով:

Ընդ որում, այդ դէպքերում, թերեւս հարկ է շեշտել, որ խօսքն ամենեւէն ծայրահեղ կամ ազդեցիկ լեզուափոխականութեան մասին չէ: Սովորաբար, երբ խօսք է գնում նոր ոճի մասին, պատասխանը լինում է այն, թէ մենք ճաղեր գրոհող չենք, մենք ապակի կտորող չենք:

Այդ արձագանքը կամ հիմնականում ինքնապաշտպանութեան դիտակցուած մեթոդ է, երբ անմիջապէս փորձ է արւում խնդրի հիմքում դնել ծայրահեղականութիւնն ու այդպիսով արգելափակել թեմայի յետագայ ծաւալումը, կամ էլ պարզապէս տարածուած մոլորություններ, թէ ընդդիմութեան նոր ոճը դա անպայման ազդեցիկ լեզուափոխականութիւնն ու շէնքեր գրոհելն է:

Ամենեւէն: Նոր ոճ ասածն առաջին հերթին պէտք է ենթադրի ոչ թէ իշխանութեան հանդէպ նոր վերաբերմունք, այլ աւելի շատ եւ ամէնից առաջ նոր յարաբերութիւն քաղաքացու հանդէպ, քաղաքացու հետ: Հայաստանում իշխանութիւնքաղաքացի յարաբերութիւնը վաղուց է ճգնաժամային, լիովին դեգրադացուած, բայց իրավիճակը տեղապտոյտի մէջ է յայտնուել ոչ թէ այդ, այլ այն պատճառով, որ արդէն այդ յարաբերութեան հետեւից «հասնում» է ընդդիմութիւնքաղաքացի յարաբերութիւնը:

Նոր ոճը, նոր բովանդակություններ, եւ թերեւս նոր կառուցուածքը այստեղ է պէտք, այստեղ պէտք է աշխուժանան դրաշուրջ քննարկումները, որոնք մենք, ինչի շնորհիւ երկրում կը ձեւաւորուի նոր «մարտադաշտ» կամ ասպարէզ, որտեղից էլ հնարաւոր կը լինի այլ «կուռ» պարտադրել իշխանութեանը:

«ԼՐԱԳԻՐ»

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՒ ԵՐՐՈՊԱՅԻ ՓՈՂԸ

Զ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Մամուլը տեղեկացնում է, որ Եւրոպան մեր իշխանութեանը փող է խոստացել, եթէ Հայաստանում արդար ընտրություններ անցկացնեն: Մեր իշխանութիւնն էլ գործի է անցել այդ վեճ նպատակին հասնելու բացառիկ ձգտումով: Եւ «Արտակարգ դրութեան իրաւական ռեժիմի մասին» օրէնք են ընդունում...

«Արտակարգ իրավիճակի» սպառնալիքը գլխից քաշելու կախուած պիտի գնանք ընտրելու: Իշխանութիւնը, օրէնքն ընդունելով, ոչ թէ իրաւական խնդիր է լուծում, այլ ինքնապաշտպանական եւ հոգեբանական: Հոգեբանականը վերաբերում է հասարակութեանը, ինքնապաշտպանականը՝ Սերժ Սարգսեանին եւ Ռոբերտ Քոչարեանին:

Ինչ քաջատրութիւն էլ տան, ինչ արդարացում էլ ներկայացնեն, չեն կարող թաքցնել իրական նպատակը: Արդարադատութեան փոխնախարարի, գանազան պատգամաւորների խօսքը՝ դատարկ ու խճճուած, ոչ թէ մեզ է հասցէագրուած, այլ եւրոպիտորդներին, որոնք, բնականաբար, պիտի պաշտպանեն իրենց շահերը: Իսկ այդ շահերը միշտ չէ, որ համընկնում են մեր հասարակութեան շահերին: Նոյն Եւրոպան տասնամեակներով համագործակցում էր արտակարգ իրավիճակում գործող արաբական ռեժիմների հետ եւ դրանց գոյությունը համարում օրինակարգ: Կրկնենք՝ Եւրոպան իր շահերն ունի: Եւրոպան նաեւ իր պատկերացումներն ունի յետխորհրդային երկրների ժողովրդավարութեան եւ հասարակութիւնների մասին: Նրան առանձնապէս չի չուզի, եթէ բանակը հսկի հայոց ընտրատեղամասերը, քուէարկությունն անցնի աւտոմատների ուղեկցութեամբ: Նրան չուզում է մէկ այլ բան: Ընտրություններից յետոյ բողոքող չլինի, կամ բողոքն արտայայտուի «քաղաքակիրթ» ձեւով. Ազատութեան հրապարակում ցուցեր չլինեն, բախումներ եւ գոհեր չլինեն: Իսկ մամուլը, ոչինչ, թող գրի զանգուածային խախտումների մասին: Կը խօսեն, կը զայրանան, ու կ'անցնի, կը սակուեն ու կ'ապրեն: Շատ հնարաւոր է, որ այսպիսի ընտրությունները եւրոպացիների կողմից հռչակուի ժողովրդավարական, եւ փողը գայ Հայաստան: Անկեղծ ասած՝ սրա մասին Արեւմուտքը դատապարտելու նպատակով չենք խօսում, բնաւ: Պարզապէս ներկայացնում ենք վիճակը՝ համոզուած լինելով, որ մեզնից բացի ոչ ոք մեր երկրի համար, մեր ճակատագրի համար պատասխանատու չէ: Եթէ մեր հասարակութիւնը կուլ տայ «արտակարգ իրավիճակ» գուժող օրէնքը, եթէ մեր քաղաքական ուժերը չհասկանան, որ այն մերժելը աւելի կարեւոր է, քան մեծամասնական ընտրակարգը փոխելու մասին խոսակցությունները, ուրեմն իշխանութիւնը ճիշտ է, ուրեմն արժանի ենք:

Այս «օրէնքի» հոգեբանական բաղադրիչն աւելի մեծ ազդեցություն կարող է ունենալ, քան կարծում ենք:

1) Մեր հասարակութիւնը դեռ չի ազատուել Մարտի մէկի սինդրոմից: Յիշենք 2011 թուականի գարնանային հանրահաւաքները:

Ամէն մէկից առաջ իշխանութիւնները բամբասանք էին տարածում, թէ նոր Մարտի մէկ է լինելու: Նպատակը մէկն էր՝ վախեցնել, պակասեցնել ցուցարարների քանակը:

2) Գարնանային գարթօնքից յետոյ Սերժ Սարգսեանն առերեւոյթ տեղի տուեց եւ յայտարարեց, որ Մարտի մէկի գործը փակուած չէ: Մի քանի ամիս անց, սակայն, գործը փաստօրէն փակեցին, որովհետեւ հասարակութիւնը հաշտուեց խաբուածի կարգավիճակի հետ:

3) 2008 թուականի Մարտին ցուցարարների դիմաց կանգնած էին բանակ գորակոչուած 18-19 տարեկան պատանիներ՝ մեր գաւակները: Յուցարարները նրանց վրայ ձեռք չէին բարձրացնի, սակայն մի գինուոր, այնուամենայնիւ, գոհուեց: Մինչեւ օրս չի բացայայտուել նրա մահուան պատճառը: Այսինքն՝ բանակը ներքաղաքական իրավիճակում օգտագործելը մեր գինուորներին դարձնում է պոտենցիալ գոհեր: Կրկնում ենք՝ ցուցարարները նրանց վրայ ձեռք չեն բարձրացրել եւ չեն բարձրացնի, բայց խառնակ իրադրութեան մէջ նրանք՝ մեր գաւակները, որոնց կը կանգնեցնեն բարիկազի այն կողմում, նոյնքան վտանգուած են, որքան բողոքող հասարակութեան իւրաքանչիւր անդամ:

4) Բազմիցս ենք ընդգծել եւ հիմա կրկնում ենք՝ Մարտի մէկը վատ ազդեցութիւն ունեցաւ թէ՛ բանակի հոգեբանութեան, թէ՛ նրա վարկանիշի վրայ:

5) Մարտի մէկի ոճրագործներ-

Շաք-ը էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արևմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՄՈՒՈՅԵԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԱՆ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.

Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

«41 ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԷԼ Կ'ԱՆՑՆԵՆ ԱՄԵՆԱԳԱՐՈՒՄՍՆԵՐԸ»-. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Եթէ մեծամասնական ընտրակարգը պահպանուի, ապա «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Արմէն Մարտիրոսեանը համոզուած է, որ 41 ընտրատեղամասերում էլ կ'անցնեն ամենահարուստները եւ խորհրդարանում կը գործեն ոչ թէ ժողովրդի, այլ իրենց շահերից:

«Վարչապետն ասում է, որ ցուցակում գործարարներ չեն լինի, միաժամանակ ասում է որ գործարարներին մեծամասնականում չեն կարող արգելել առաջադրուելու: Եթէ իրականում կայ ցանկութիւն որպէսզի նրանք չյայտնուեն, ապա լաւ կը լինէր համամասնականը ընդունուէր եւ իրենց գործ ու խօսքը իրար համընկնէին», - ասաց Արմէն Մարտիրոսեանը:

Խօսելով հարիւր տոկոսանոց համամասնական ընտրակարգի մասին՝ պատգամաւորը նշեց, որ այս հարցում ժամանակի ինդիւր չի կարող լինել:

«Այս հարցը իր հետեւից չի բերում նոր ընթացակարգեր, ընդամենը երկու ընթացակարգ կուսութիւնը կատարում է եւ օրէնքից հանուած է մեծամասնականին»:

«ՍԱՐԴԱՐԱՊԱՏ» ՇԱՐԺՈՒՄԸ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼ

Ընտրական իրաւունքի բացայայտ ու աղաղակող խախտումներով տեղի ունեցած Հրազդանի քաղաքապետի ընտրութիւնները մէկ անգամ եւս ցոյց տուցին, որ քրէսօլիգարիկ վարչախմբի վերջնական նպատակը Հայաստանում ամբողջատիրութեան հաստատումն է: Նման բովանդակութեամբ յայտարարութիւն է տարածել «Սարդարապատ» շարժումը:

Յայտարարութիւնում, մասնաւորապէս, ասում է.

«Այդ նպատակի մասնակի իրականացման մասին է վկայում նաեւ նոյն օրը Հայաստանի 39 համայնքների մի զգալի մասում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնները մէկական թեկնածուներով անցկացնելու փաստը: Օգտուելով ազգային պետութիւն կառուցելուն միտուած այլընտրանքային քաղաքական մշակույթի եւ ուժալ դիմադրութեան բացակայութիւնից, վարչախումբը հետեւողականօրէն ու մեթոդաբար մեզ վերադարձնում է խորհրդային ամբողջատիրական քաղաքական մշակույթի ճահիճը:

«Վարչախումբը լիակատար վերահսկողութիւն է հաստատել առկայ քաղաքական համակարգի վրայ, իսկ ընտրութիւնները վերածել է իր վերարտադրութեան անխափան մեխանիզմի: Նոյնիսկ մէկ առանձին վերցրած համայն-



«Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Արմէն Մարտիրոսեան

վերաբերող մասը», - նշեց նա:

Արմէն Մարտիրոսեանն ընդգծեց նաեւ, որ առաջիկայում իշխանութեան ներկայացուցիչները որոշակի առումով պայմանաւորուածութիւններ ձեռք կը բերեն, որպէսզի միմեանց չխանգարեն:

«Որոշ ժամանակ յետոյ կը տեսնենք աւանդական ձեւով ընթացող նախընտրական շրջան: Եւ չի լինի այն, ինչ կանխատեսուած էր, այսինքն՝ պայքար իշխանութեան միջեւ», - ասաց պատգամաւորը:

քում՝ ընդդիմութեան գրեթէ ամբողջ ներուժի մոբիլիզացման եւ քաղաքապետի թեկնածու Սասուն Միքայէլեանի բացառիկ հեղինակութեան ու առաւելագոյն թիւով կողմնակիցներ ունենալու պարագայում, հերթական անգամ ստիպուած ենք արձանագրել, որ կատարելութեան հասցուած ընտրակեղծիքները մեքենան անյաղթահարելի է:

«Ընտրողներին քաղաքականապէս հասուն չլինելու եւ ընտրակեղծիքների գործիք դառնալու մէջ մեղադրելը քաղաքական մանկամտութիւն է: Խորհրդային ամբողջատիրական քաղաքական մշակույթից դեռեւս լիովին չկտրուած ընտրողի տեսադաշտը փակուել է այդ մշակույթի վերարտադրող տարատեսակով, ուստի նա չի կարող տեսնել իրավիճակը յաղթահարելու իրատեսական լուծումներ: Տիրապետող քաղաքական մշակույթի տիրույթում յայտնի գործելակերպերը՝ ընտրութիւններին մասնակցելը կամ դասական իմաստով դրանք բոլորտեղը, արդիւնք չեն տալիս:

«Նշուած քաղաքական-մշակութային փակուղղուց դուրս գալու ճանապարհը քաղաքական ստեղծագործութեան միջոցով ժողովրդավարական այլընտրանքային քաղաքական մշակույթի ու համակարգի ձեւաւորման միջավայրի ստեղծումն է:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈ

Իշխող Հանրապետական կուսակցութեան փոխնախագահ, Ազգային ժողովում Հանրապետական խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանի խօսքով, առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները յետոյ ներկայիս կառավարութիւնը փոխուելու է:

«Բնականաբար, ինչ-որ փո-

փոխութիւններ կը լինեն, բայց դեռ պատկերացումներ չկան: Խորհրդարանին մեծ դերակատարում է տրուած կառավարութիւն կազմաւորելու գործում, բայց խորհրդարանը քաղաքական բանակցութիւններ ճամբար է: Այսինքն այնպէս չէ, որ մի քաղաքական ուժ լրիւ իր ձայները բաւարարի, յամենայնդէպս մենք այդ տեսակի է, եւ ասեմք, մեր ձայները բաւարարում է եւ քուէարկենք, որ կառավարութիւնը մեր ուզած ձեւով լինի կամ մեր ուզած մարդիկ: Այնտեղ փոխհամաձայնութիւնների մեխանիզմ է: Այնպէս չէ, որ այսօր մի անձի պատկերացնես, եւ

«ԲՅԿ-ԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ՝ ՕՍԿԱՆԵԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՐՄԱԼ ԵՐԵՒՈՅԹ Է»

Փետրուար 14-ին պաշտօնապէս յայտնի դարձաւ, որ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանն անդամակցելու դիմում է ներկայացրել Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան (ԲՀԿ):

Հայաստանի քաղաքական ուժերը որեւէ արտաուոց բան չեն տեսնում Օսկանեանի՝ «Բարգաւաճ Հայաստանին» անդամակցելու մէջ:

«Հայ Յեղափոխական դաշնակցութիւն» կուսակցութեան Գերագոյն մարմնի անդամ Սպարտակ Մէյրանեանը նոյնիսկ տրամաբանական է համարում այս քայլը՝ հաշուի առնելով, որ մօտ 15 օր առաջ նախկին արտգործնախարար այս մասին յայտարարել էր:

«Նա ասաց, որ իր քաղաքական ապագան տեսնում է այս կուսակցութիւնում, եւ եթէ քաղաքական ուժն ու քաղաքական գործիչը միմեանց հետ ընդհանրութիւններ են տեսնում, ես ինչ պէտք է մեկնաբանեմ», - ասաց Սպարտակ Մէյրանեանը:

Հարցին ի պատասխան, թէ «աւանդաբար» Վարդան Օսկանեանի եւ ՀՅԴ-ի միջեւ էին ջերմ յարաբերութիւններ վերագրուած, Սպարտակ Մէյրանեանը նկատեց՝ «հիմա էլ են ջերմ»:

«Հայաստանի հանրապետական կուսակցութեան» խմբակցութեան քարտուղար Գագիկ Մելիքեանի դրանում նոյնպէս արտասովոր բան չի տեսնում:

ԿՈՒԼԻՑԻԱՅԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Փետրուար 13-ին նախագահական նստավայրում նախագահ Սերժ Սարգսեանի, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ղեկավար Գագիկ Մառուկեանի եւ «Օրինաց երկիր» կուսակցութեան ղեկավար Արթուր Բաղդասարեանի մասնակցութեամբ տեղի ունեցած քաղաքական կոալիցիայի նիստում երեք քաղաքական ուժերը յստակեցրել են «խաղի կանոններն» առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին ընդառաջ:

Այս մասին «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց Ազգային ժողովի փոխնախագահ, իշխող Հանրապետականի խօսնակ էդուարդ Շարմազանովը: Նրա փոխանցմամբ, թէեւ որեւէ փաստաթուղթ չի ընդունուել, բայց կողմերը վերջնական համաձայնութեան են եկել ընտրութիւններին սեփական, առանձին ընտրացուցակներով հանդէս գալու հարցի շուրջ, ինչպէս նաեւ պատրաստամտութիւն են յայտնել ընտրութիւններին մասնակցել «փոխադարձ հանդուրժողականութեան միջոցով», շարժուել «քաղաքակիրթ մրցակցութեան կանոններով», կարեւորուել է նաեւ «ազնիւ մրցակցութեամբ ազատ, արդար եւ թափանցիկ ընտրութիւններ անցկացնելու վճռականութիւնը»:

էդուարդ Շարմազանովը բացասական պատասխանեց «Ազա-



Նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեան

«Իր որոշելիք ինդիւրն է, մարդը իր անձնական որոշումն է կայացրել, որեւէ արտաուոց բան չեմ տեսնում, որ պարոն Օսկանեանը որոշել է անդամակցել կոալիցիոն ԲՀԿ-ին», - Tert.am-ի հետ գրոյցում ասաց նա:

«Ժառանգութիւն» խմբակցութեան անդամ Արմէն Մարտիրոսեանը կիսում է կարծիքը, որ ԲՀԿ-ին անդամագրուելու՝ Օսկանեանի նախաձեռնութիւնը բնական էրեւոյթ է:

«Վարդան Օսկանեանը որպէս ՀՀ քաղաքացի ազատ է ընտրել իրեն հոգեհարազատ կուսակցութիւն եւ դրա անդամը լինելուց կամ՝ համամասնական ցուցակ մտնելով՝ վերադառնալ մեծ քաղաքականութիւն», - Tert.am-ի հետ գրոյցում ասաց Արմէն Մարտիրոսեան:

տութիւն» ռադիոկայանի այն հարցին, թէ արդեօ՞ք կոալիցիոն գործընկերների միջեւ վերջին շրջանում փոխադարձ հանդուրժողականութեան պակաս կամ անվստահութիւն կար, որ այդ հարցը դարձել է կոալիցիայի նիստում քննարկման առարկայ: Նա նաեւ որեւէ կապ չտեսաւ Աժ-ի անցած շաբաթուայ քառօրեայում ԲՀԿ պատգամաւորների բոլորտի եւ այս հանդիպման միջեւ:

ՀՀԿ-ի համամասնական ցուցակը, ըստ էդուարդ Շարմազանովի, վերջնական տեսք կը ստանայ Մարտին՝ Հանրապետականի համագումարի յաջորդող օրերին: «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօ՞ք Սերժ Սարգսեանը կարող է լինել ցուցակի առաջին հորիզոնականում, ՀՀԿ-ի խօսնակը պատասխանեց. - «Չեմ բացառում, ոչ հաստատում եմ, ոչ հերքում: Քանի դեռ ցուցակների հարցի քննարկումները վերջնականապէս աւարտուած չեն, ես կուսակցութեան համարում իմ տեսակետներն արտայայտել: Ամէն դէպքում, ինչպիսի ցուցակ էլ ունենանք, ով էլ գլխաւորի այն, ցուցակի ներկայացուցիչներն ու ՀՀԿ-ն կը շարունակեն այն բարեփոխումները, որ առաջին հերթին կապուած են նախագահ Սարգսեանի ծրագրի, նրա անձի ու գործունէութեան հետ»:

գնաս փոխհամաձայնութիւնների: Առաւել եւս կարող է որեւէ ուժ բացարձակ մեծամասնութիւն չունենալ, դրա համար այսօրուանից մտածել, թէ ով վարչապետ կը լինի, ով նախարար, ժամանակավրեպ է», - ասաց Գալուստ Սահակեանը:

ԼՈՒՐԵՐ

ՍԹՐԱԹՖՈՐ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆԱԽԿԻՆ ԽՍՐՄ-Ի ԱՐԵԻՄՏԱՍԵՏ ՃԱՄԲԱՐԻ ՄԱՍԸ ՉԷ»

Հայաստանը Մոսկովայի պլաց-դարմն է Կովկասի կենտրոնում: Այս մասին նշում է Stratfor հետազոտական կենտրոնի՝ Հարա-ւաչին Կովկասին նուիրուած յօդ-ուածում: «Ռուսաստանի վերած-նունդ» խորագրի ներքոյ կենտրո-նը յօդուածներ է հրատարակում Ռուսաստանի եւ նախկին ԽՍՀՄ հանրապետութիւնների յարաբե-րութիւնների մասին:



Խարհագրական դիրքը եւ ռազմա-վարական կարեւորագոյն ռե-սուրանների բացակայութիւնը, Հա-յաստանը որպէս ազդեցիկ հովա-նաւոր ընտրել է Ռուսաստանին, որը վերահսկում է երկրում ենթա-կառուցուածքների մեծ մասը:

Միաժամանակ՝ Stratfor-ի վեր-լուծաբանները նշում են, թէ Հա-յաստանը Ռուսաստանի համար բուժեքային գօտի է Կովկասում:

«Հայաստանը Մոսկովայի հա-մար պլացդարմ է ծառայում Կով-կասի կենտրոնում, քանի որ սահ-մանակից է ինչպէս Ադրբեջանի եւ Վրաստանի, այնպէս էլ Թուրք-իայի եւ Իրանի հետ: 2012թ-ին Ռուսաստանի հիմնական նպատա-կը Հայաստանի համար Միասնա-կան տնտեսական տարածքում եւ Եւրասիական միութիւնում հնա-րաւոր ինտեգրացիայի նախապատ-րաստումն է», - նշում է յօդուա-ծում:

Փորձագէտների խօսքով՝ Ռու-սաստանը Հայաստանի վրայ ազդե-լու քաղաքական, տնտեսական լծակ-ներ ունի: «Մոսկովայի ազդեցում է նախագահ Սերժ Սարգսեանին եւ կառավարող Հանրապետական կու-սակցութեանը, սակայն կապեր ունի նաեւ նախկին նախագահներ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Ռո-բերտ Բոչարեանի հետ», - ենթադ-րում են կենտրոնի փորձագէտները՝ նշելով, որ հաշուի առնելով աշ-

«Իհարկէ, ԱՄՆ-ում եւ Ֆրանսիայում գոյութիւն ունի ազ-դեցիկ հայ համայնք, սակայն նրանց ներգրաւուածութիւնն աւելի շատ տնտեսական բնոյթ ունի, քանի որ Հայաստանը Ռուսաստանի ուղեծ-րում է, ոչ թէ նախկին ԽՍՀՄ արեւմտամէտ ճամբարի մասը: Բացառութեամբ Ռուսաստանի աշ-խարհաքաղաքական դիրքի թու-լացման՝ մնացած սցենարների դէպ-քում Հայաստանը, ինչպէս ակն-կալում է, հետագայում եւս հա-ւատարիմ կը մնայ Մոսկովային եւ կը շարունակի մասնակցութիւն ու-նենալ Կրեմլի տարածաշրջանային նախաձեռնութիւններին», - եզրա-կացնում են Stratfor-ի վերլուծա-բանները:

ԿԵՐԼՈՒԾԱԲԱՆՆԵՐԸ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀՆԱՐԱԴՈՐ ՍՅԵՆԱՐՆԵՐԸ

Քաղաքական վերլուծաբան Արմէն Բաղալեանը կարծում է, որ եթէ «Հայ ազգային կոնգրէս» (ՀԱԿ) ընդդիմադիր դաշինքը եւ «Բար-գաւաճ Հայաստան» (ԲՀԿ) կուսակ-ցութիւնը գրագէտ աշխատեն եւ թոյլ չտան «նկարչութեամբ» զբաղուել, ապա յաջորդ գումար-ման խորհրդարանում կը լինի իրաւահաւասար կողմիցիա՝ բաղ-կացած «Հայաստանի հանրապե-տական կուսակցութիւնից», ԲՀԿ-ից եւ ՀԱԿ-ից: Հակառակ պարա-գայում ՀՀԿ-ը կրկին կ'ունենայ 67-ից աւելի ձայն, եւ այս դէպքում ԲՀԿ-ը քաղաքականապէս կը վերա-նայ:

Լրագրողների հետ հանդիպ-մանը վերլուծաբանն ասաց, որ ՀԱԿ-ին նման սցենարի դէպքում ԲՀԿ-ի հեռանկարը չի սպառնում, քանի որ ՀԱԿ-ը ընդդիմութիւն է:

Արմէն Բաղալեանը ապագայ խորհրդարանի կառուցուածքը պատկերացնելու համար առաջար-կում է Հայաստանի քաղաքական ուժերին դասել հետեւեալ խմբե-րում. Խումբ առաջին՝ առաւել ազդեցիկ քաղաքական ուժեր, որ-տեղ են ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն եւ ՀԱԿ-ը, երկրորդ խումբ՝ «Հայ Յեղափո-խական Դաշնակցութիւն» եւ «Ժա-ռանգութիւն», երրորդ խումբ՝ «ար-դէն մահացած ՕԵԿ» («Օրինաց երկիր»), եւ չորրորդ՝ վիրտուալ կուսակցութիւններ, որոնք գոր-ծում են մամուլի ակումբներում եւ վիրտուալ դաշտում, բայց իրա-կան կուսակցական գործունէութիւն չեն իրականացնում: Նման կու-սակցութիւնների շարքին Արմէն Բաղալեանը դասում է «Ազատ դեմոկրատներին», «Նոր ժամա-նակներ կուսակցութեանը», «մարք-սիստներին», «Միաւորուած աշ-խատանքային կուսակցութեանը», «Ազգային ժողովրդավարական միութիւն», «Ազգային ժողովր-դավարների դաշինք» եւ այլ կու-սակցութիւններ:

Այս դասակարգմանը հետեւե-լով՝ Արմէն Բաղալեանը կասկա-ծում է, որ ՕԵԿ-ը, ՀՅԴ-ն եւ «Ժառանգութիւնը» կը լինեն ապագայ Աժ-ում, թէեւ, այդուհան-դերձ, նարաւոր է համարում դա: «Դաշնակցութիւնը խիստ կասկածում եմ: Ինչո՞ւ, որովհետեւ վերջին երեք տարիներին նա հե-տեւեալ տենդենցն է գրանցել, 2007թ.

խորհրդարանական ընտրութիւն-ներին ստանում է 170.000, մէկ տարի յետոյ նախագահականին՝ 96.000, մէկ տարի յետոյ 18.000: Այսինքն մօտաւորապէս 50%-ի անկում է գնում», - ասաց նա:

Ըստ Բաղալեանի՝ այս դինա-միկայի դէպքում այլ փոփոխու-թիւններ չեն եղել: Այսինքն, կու-սակցութեան լիդերները մնացել են նոյնը, իսկ «Հայաստանում էլ «ծովից ծով» աստղների թիւը չի աւելացել»:

Ինչ վերաբերում է «Ժառան-գութեանը», ապա, ըստ բանախօ-սի, այս կուսակցութեան առաջ-նորդ Բաֆֆի Յովհաննիսեանը վեր-ջին տարիներին կորցրել է իր խարիզմատիկ յատկանիշները՝ ժա-մանակ առ ժամանակ յայտնուելով ու անհետանալով քաղաքական դաշ-տից:

Քաղտեխնոլոգ Կարէն Քոչար-եանը ընդհանուր առմամբ համա-ձայն է գործընկերոջ հետ, սակայն մի շարք «նիւանաների» պարա-գայում ունի իր տեսակէտը: Առա-ջին այն է, որ նա կասկածում է, որ ՀՅԴ-ն ներկայացուած չի լինի ապագայ խորհրդարանում: Կարէն Քոչարեանը նաեւ չի կիսում տեսակէտը, թէ «Ազատ դեմոկր-տաներ» կուսակցութիւնը վիրտու-ալ քաղաքական ուժ է:

«Երկու օրուայ կուսակցու-թիւն լինելով Միացեալ Նահանգ-ների երկու վերջին դեպքումներն այցելեցին այս կուսակցութիւն՝ դրանով ցոյց տալով, որ ԱՄՆ-ն այս կուսակցութեանը պաշտպա-նում է տարբեր ձեւերով՝ բարոյա-պէս, ֆինանսապէս եւ այլն», - ասաց Կարէն Քոչարեանը:

Քաղտեխնոլոգը վստահ է, որ «Ժառանգութիւն» եւ «Ազատ դե-մոկրատներ» դաշինքը կայանում է: Ասաց, որ եթէ անգամ ձեւական առումով դա դաշինք չկոչուի՝ կապուած եօթ տոկոսի արգելան-քի հետ, միեւնոյն է, այդ դաշինքը լինելու է:

Կարէն Քոչարեանը, մասամբ համաձայնելով, որ Բաֆֆի Յով-հաննիսեանի խարիզմատիկ վար-կանիշը մասամբ ընկել է, պնդեց, որ այն որոշ առումով պահպան-ւում է: Եւ նաեւ համամիտ չէ Արմէն Բաղալեանի հետ, թէ ԲՀԿ-ը եւ ՀՀԿ-ը կարող են միմեանց հետ աշխատել:

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՅԵԼԱԾ ԶՐՕՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԹԻՒՆ ԱԻԵԼԱՑԵԼ Է 10.3 ՏՈԿՈՍՈՎ

Անցեալ տարի Հայաստան է այցելել շուրջ 758 հազար զբօսաշրջիկ: Այս մասին յայտա-րարեց էկոնոմիկայի փոխնախա-րար Արա Պետրոսեանը:

«Բաւականին մեծ տոկոս են կազմում ԱՊՀ տարածքից Հայաս-տան ժամանած զբօսաշրջիկները, որից յետոյ՝ եւրոպական տարա-ծաշրջանից զբօսաշրջիկներ են: Լուրջ հոսքեր ունենք Ճապոնիա-յից, սկսուել են նաեւ հոսքեր հարաւ-արեւելեան Ասիայից», - յայտարարեց Պետրոսեանը՝ եզրա-կացնելով. - «Մի խօսքով, աշխար-հագրութիւնը բաւականին ընդ-լայնուում է»:

Այլ տուեալներ ունի տեղական տուրիստական գործակալութիւն-ներից մեկի տնօրէն Կարէն Ան-թաշեանը: Նրա խօսքով, զբօսաշր-ջիկ դիտարկուող Հայաստանի այ-ցելուների մեծ մասը շարունակում են մնալ Սփիւռքի մեր հայրենա-կիցները:

«Իսկ անցած տարի [զբօսաշր-ջիկների] այգլպիսի մեծ թիւը հա-ւանաբար կապուած է մի շարք համահայկական միջոցառումների անցկացման հետ», - յաւելեց նա՝ յիշատակելով, մասնաւորապէս, Համահայկական խաղերը:

Պաշտօնական թուերը ցոյց են տալիս, որ 2010-ի համեմատ՝ 2011 Հայաստան այցելած զբօսաշրջիկ-

ների թիւը աւելացել է 10.3 տոկո-սով: Զբօսաշրջութեան ոլորտի պաշտօնեաները, ինչպէս միշտ, լաւատես են:

«2012-ին նախատեսում է հա-տել 800 հազարի սահմանը», - ասում է էկոնոմիկայի փոխնախա-րարը:

«Ազատութիւն» ռադիոկայա-նի դիտարկմանը, թէ միգրացի Հա-յաստան այցելողների մեծ մասը արտերկրում ապրող հայերն են, ովքեր Հայաստանով հետաքրքր-ուած են ոչ թէ որպէս տուրիստա-կան երկիր, այլ գալիս են տեսնելու իրենց հարազատներին, էկոնոմի-կայի նախարարի տեղակալը ար-ձագանքեց, թէ Հայաստանի այցե-լուների մէջ մեծ թիւ չի կազմում այն մարդկանց թիւը՝ «որոնք կարող են Հայաստան ժամանելիս դասուել տուրիզմի ոլորտում»:

Յիշեցնենք՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի «Ճամբոր-դութիւն եւ զբօսաշրջութիւն. մրցունակութիւն 2011» գեկոյցում 139 երկրների շարքում Հայաստա-նը 90-րդ տեղում է:

Զբօսաշրջութեան համաշխար-հային կազմակերպութեան տու-եալներով՝ 2011-ին ամբողջ աշ-խարհում տուրիստական հոսքերի աճ է նկատուել՝ 4.5 տոկոսով, եւ զբօսաշրջիկների բացարձակ թիւը կազմել է 980 միլիոն:

ԵԹԷ ՉԷՔ ՍԻՐՈՒՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ԲԱՌԸ, ԳՏԷՔ ՄԵԿ ՈՒՐԻՇ ԲԱՌ. ԱԶՆԱԴՈՐ

Փետրուարի 12-ին ֆրանսի-ական «France 2» հեռուստալիքի կատրին Սէյլաքի հաղորդմանը հիւ-ընկալուել էր աշխարհահռչակ երգիչ Շառլ Ագնաուրը, գրում է «Nouvelles d'Armenie»-ն:

Հաղորդման վերջում անդրա-դարձ է եղել Հայոց ցեղասպանու-թեան ժխտումը քրէականացնող օրէնքին: Ագնաուրը սկզբում նշել է, որ օրէնքը «ի սկզբանէ նպաս-տաւոր չի եղել», այնուհետ վերսկ-սել է իր նախադասութիւնը եւ ընդգծել, որ ոչ թէ նպաստաւոր չէ, այլ, որ «սփիւռքը կարող է հրաժարուել ցեղասպանութիւն բառից, որ ամէն ինչ շատ լաւ

լինի»:

«Եթէ չէք սիրում ցեղասպա-նութիւն բառը, գտէք մէկ ուրիշ բառ: Յետոյ, մի վախեցէք: Մենք չենք ցանկանում հետ ստանալ մեր տարածքները: Ֆրանսիան այժմ շատ հանգիստ է: Գերմանիան նրանից չի պահանջում Ալլգաւր եւ Լօրէնը: Այսպէս ես մի գեղեցիկ շնորհակալական նամակ ուղարկե-ցի Նիկոլա Սարկոզիին եւ յետոյ հետ կանգնեցի: Նրանք չեն ցանկա-նում առաջ գնալ, դրա համար էլ ես հետ եմ կանգնում: Բայց կը գայ այն օրը եւ նրանք կ'ընդունեն, որ այն տեղի է ունեցել», - յաւելել է նա:



ՈԱՖԻՔ ՀԱՐԻՐԻ ԵՆԱՏԱԿՈՒԹԵԱՆ 7-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ՆՇՈՒՄԸ



Մարտ 14-ին Լիբանանի հանրապետության նշանավոր քաղաքական և քաղաքական գործիչ Ռաֆիք Հարիրիի նախագահության կողմից Լիբանանի տարբեր շրջաններէ պետական կրօնական, քաղաքական, հասարակական կազմակերպութիւններու եւ կառույցներու ներկայացուցիչներ աչքելեցին նախագահական դամբարանը: Կէսօրու ժամերուն, Մուսթաֆայի Նուսրու ներկայացնող երեսփոխանները յիշատակի մոմեր վառեցին նախագահական դամբարանին առջեւ, ապա գետեղեցին ծաղկեպսակներ:

Ազգային Պաշարի ձակատ խորհրդարանական խմբակցութեան ներկայացնող նախարարները եւ երեսփոխանները՝ Թէյմուր ճոմպլաթի ընկերակցութեամբ աչքելեցին դամբարան, ապա Ուալիտ ճոմպլաթի եւ Ընկերվար Յաւաթ-դիմական Կուսակցութեան անունով ծաղկեպսակներ գետեղեցին: Ժամը ուղիղ 12.55-ին յիշատակի ճրագ մը վարեցաւ նախագահական դամբարանին վայրին մէջ: Ան կողոնցաւ ազատութեան ճրագ:

Նոյն օրը, ՄԴՀԿ Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմնոյ, մարզական, մշակութային եւ կրթական միաձուլումներու ներկայացուցիչներ, երեսփոխան Սեպուհ Գալիպեանի եւ Վարիչ Մարմնոյ փոխ ատենապետ ընկ. տոքթ. Մարտիկ Ժամկոչեանի ընկերակցութեամբ աչքելեցին նախագահական դամբարանին առջեւ:

Այս առիթով, պետական երեսփոխան ընկ. Սեպուհ Գալիպեանի հաստատեց, թէ ՄԴՀ Կուսակցութեան Լիբանանի Շրջանի Վարիչ Մարմինը

հաւատարիմ պիտի մնայ նախագահական վարչապետ Ռաֆիք Հարիրիի սկզբունքներուն ժողովրդավար եւ ժամանակակից Լիբանան կերտելու համար:

Կէսօրէ ետք, պետական, քաղաքական, հասարակական կազմակերպութիւններու եւ հոմբազութեան մը ներկայութեան Պէյլի մէջ տեղի ունեցաւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի նախագահութեան եօթներորդ տարելիցին նուիրուած հանդիսութիւն: Հանդիսութեան գլխաւոր խօսք առնողները դատաւարտեցին քաղաքական ոճիրներու մշակոյթը, պահանջելով ճշմարտութեան բացայայտումը:

Անոնք դատաւարտեցին ապօրէն գէնքը, ինչպէս նաեւ անդրադարձան շրջանային զարգացումներուն: Փողանգաւոր Կուսակցութեան պետ Ամին Ճեմալէլ շեշտեց Մարտ 14-ի ուժերու միասնականութիւնը: Ան նաեւ գորակցութիւն յայտնեց արաբական աշխարհի մէջ տեղի ունեցող յեղափոխութիւններուն: Արբանեակային հեռափոխումով, նախկին վարչապետ Մաստ Հարիրի պահանջեց շարունակել Միջազգային Ատենին հետաքննութիւնները, մինչեւ ոճրագործներուն բացայայտումը: Ան երկխօսութեան կոչ ուղղեց լիբանանցիներուն, պայմանաւ որ երկխօսութեան առաջին օրակարգը դառնայ Հրգպալլայի գէնքը: Լիբանանեան Ուժեր Կուսակցութեան Գործադիր Խորհուրդի պետ Սամիր Ժաաթա շեշտեց Լիբանանեան Ուժերու եւ նախագահական վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ միացեալ կեցողութեան քննարկը եւ Հրգպալլային կոչ ուղղեց մասնակցելու պետականութիւն կառուցելու ճիգերուն:

ՏԻՆՔԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒՆ ԴԵՄՆՈՐ ԴԻՐՍՈՒՄ-ԲՈՂՈՔԱԳԻՐ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ

«Ակօս» թերթի գլխաւոր խմբագիր Հրանդ Տինքի ընտանիքին փաստաբանները դատախազութեան նոր դիմում-բողոք ներկայացնելով՝ Տինքի սպանութեան պատասխանատու պետական պաշտօնեաներուն դէմ մէկ անգամ եւս բողոքեցին: Բողոքագիրին մէջ նշուած է, որ կանխամտածուած սպանութիւնը տեղի ունեցաւ պետական պաշտօնեաներուն անփոյթ վարքագիծ ցուցաբերելուն պատճառով: Այս մասին կը յայտնէ թրքական «Տեմոքրատ հապէր» կայքը:

Նախապէս այս հարցին գծով նոյնպիսի բողոքագիր մը տրուած էր դատախազութեան: Երկրորդ դիմումին մէջ բողոք կը ներկայացուի՝ Տրապիզոնի նահանգային ոստիկանութեան հրամանատարութեան, Տրապիզոնի եւ Պոլսոյ անվտանգութեան տեսչութեան պաշտօնեաներուն դէմ՝ Տինքի սպանութիւնը չկանխելու, հասարակական զգուշացումներ չառնելու, սպանութեանէն ետք ապացոյցները փոխելու, թաքցնելու, հետաքննութեան ընթացքին պետական պաշտօնեաները հարցաքննութեան չկանչելուն համար:

«Հրանդ Տինքի ապրած եւ աշխատած Պոլսոյ մէջ, Պոլսոյ

անվտանգութեան տեսչութեան տնօրէն Ճելալտաշին Ճելալ, Պոլսոյ հետախուզութեան մասնաճիւղի տնօրէն Ահմէթ Իչճան Կուլէրի գլխաւորութեամբ՝ Տինքի սպանութիւնը կանխելու համար՝ պետական պաշտօնեաները չկատարեցին իրենց պարտաւորութիւնները, եւ այս սպանութեան գործադրութեան մասին տեղեակ ըլլալով՝ հանդերձ՝ սպանութեան ընթացք տուին: Այդ պատճառով ալ Պոլսոյ անվտանգութեան տեսչութեան պաշտօնեաները Տինքի սպանութեան համար պատասխանատու են», - ըսուած է դիմում-բողոքագիրին մէջ:

«Կասկածեալ պետական պաշտօնեաները, դիտաւորեալ սպանութեան նկատմամբ անփոխութեան պահուած քիւն յանցանքով, սպանութիւնը գործադրող զինեալ կազմակերպութեան Տինքի ուղղուած մահափորձը չկանխելու համար՝ պատճառ դարձան անոր սպանութեան», - կ'ըսուի բողոքագիրին մէջ:

Դիմում բողոքի վերաջառութեան կը ներկայացուի կասկածեալներուն նկատմամբ հարցաքննութիւն կատարելու եւ պատժելու համար դատական գործ հարուցելու պահանջը:

ՍՈՒՐԻՈՅ ՆՈՐ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆՐԱՔՈՒԷՆ 26 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

Սուրիոյ նախագահ Պաշշար Ալ Ասատ ստորագրած է թիւ 85 թուակիր հրամանագիրը, որ կը յայտնէ 26 Փետրուար 2012ին տեղի պիտի ունենայ Սուրիոյ հանրապետութեան նոր սահմանադրութեան նախագիծին հանրաքուէն: Այս մասին կը յայտնէ սուրիական «Սանա» գործակալութիւնը:

Աւնուագն 14 մարդ զոհուած է Սուրիոյ երկրորդ ամենամեծ քաղաքին՝ Հալէպի մէջ տեղի ունեցած փոխհրաձգութեան հետեւանքով, կը տեղեկացնէ Sky News-ը:

Կառավարական եւ ընդդիմադիր ուժերու միջեւ տեղի ունեցած բախումներուն պատճառով ծանր մարմնական վնասուածքներ ստացած են նուազագոյնը 90 հոգի: Բնակիչներուն խօսքերով՝ մէկ շաբաթ առաջ իրականացուած

ահաբեկչութեանէն ետք, քաղաքին մէջ կրակոցները երթալով կը սաստկանան:

«Դիմակներով մարդիկ սեւ մեքենայի միջէն կրակ արձակեցին, տղաս այդ պահուն փողոցն էր ու փամփուշտը անոր դպաւ», - ըսած է ակնատեսներէն մէկը: Մէկ այլ ակնատեսի խօսքերով՝ Հալէպ երբեք այսպիսի տեսք չի ունեցած:

Իսկ Ռուսաստանի արտաքին գործոց նախարարութիւն հերքած է տարածուած այն տեղեկութիւնը, թէ Ռուսաստանի զինուած ուժերը հանդէս կու գան սուրիական կառավարական զօրքերուն կողմէ՝ ապահովելով զանոնք քիմիական զէնքով: Ասիկա զրպարտութիւն է ու չի համապատասխաներ իրականութեան, ըսած է Ռուսաստանի ԱԳ նախարարութիւնը: Այս մասին կը հաղորդէ «Ռիա Նովոսթի»:


Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909



SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs


<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> - Life Insurance - Health Insurance - Group & Individual - Long Term Care - Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> - Estate Planning - Will & Living Trust - Full Annual Review - Mortgage Protection - College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> - Workman's Compensation - Employee Benefits - Annuity - IRA - 401K & 403B
--	---	---



A.A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.



Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

125 ՏԱՐԵԿԱՆ ԴԱՍԱՏՈՒ ՄԱՅՐԸ ԴՆՉԱԿԸ

ՄԵԹՐ ՊԱՐԳԵԻ ԴԱԻԹԵԱՆ

Այս տարի, Հնչակեան կուսակցությունը կը դառնայ 125 տարեկան: Սփիւռքահայ կոչուող մեր ժողովուրդի ամէն մէկ ընտանիքի մէջ, հեռաւոր կամ մտաւոր ազգականի մը կողմէ, լայնատարած ներկայութիւն կը վայելէ Հայ քաղաքական եւ յեղափոխական առաջին կուսակցութիւնը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, որուն հանդէպ սէր ու յարգանք կը տածէ երախտապարտ եւ գիտակից հայր, գայն կոչելով «մայր կուսակցութիւն»:

Ոմանք արդարօրէն պիտի ըսեն որ եթէ աշխարհի տարբեր երկրներու մէջ լայնատարած ներկայութիւն ունի, հոս ու հոն փոքր եւ աննշան թիւերով, չունի սակայն զգալի եւ զանգուածային ներկայութիւն:

Բայց ինչու՞ Միջին Արեւելքի եւ Ամերիկայի հայ գաղթածախներու մէջ այդքան լայն տարածութիւն ունեցող կուսակցութիւն մը, որ յետ-եղեռնեան ազգային կեանքին մէջ ունեցած է զանգուածային, զգալուն եւ տիրական ներկայութիւն, չունի այսօր իր անցեալին ունեցած զանգուածային ներկայութիւնը:

Պատասխանը պիտի փորձեմ տալ վկայակոչելով որոշ իրողութիւններ որ պատահեցան Համաշխարհային Ա. պատերազմէն մինչեւ Բ. Պատերազմ, եւ անկէ ետք ալ Պաղ Պատերազմի ժամանակաշրջանին (1947-1990), եւ որ մեծապէս ազդեցին, ուղղեցին ու ճշգրեցին մեր սփիւռքահայ կեանքը: Պատմականօրէն ընդունելի իրողութիւն է թէ Ապրիլ 24, 1915-ին, Հայ երեւելի անձնաւորութիւններու ձերբակալութիւններէն եւ սպանու-

թիւններէն զրեթէ տարի մը առաջ, թուրք ցեղասպան իշխանութիւնները 1914-ի Յունիս ամսուն, ձերբակալեցին եւ ապա սպաննեցին Հնչակեան կուսակցութեան հեռատես ղեկավարութիւնը (մտաւորապէս 144 անձ) որ կը ծրագրէր իթիհատ ղեկավարութեան ոչնչացման անհրաժեշտութիւնը: Ձերբակալութեան ժամանակ իր ընկերները որոնք դարձան Հնչակեան կուսակցութեան փառքը կերտող Քսան Կախաղանները (Յունիս 15, 1915): Իթիհատ վէ թէրաքըր թուրք ցեղասպանները, Հնչակը նկատելով իրենց ամենէն աւելի վտանգաւոր եւ երդուալ հայ թշնամին, ամենէն առաջ անոր չէզոքացումով կը միտէին ճամբայ հարթել եւ գործադրութեան դնել իրենց կանխամտածուած եւ կանխածրագրուած հայկական ցեղասպանութիւնը: Հնչակեանութիւնը տկարացնող եւ Հնչակեանութեան դէմ թիւ մէկ հարուած պիտի գոչեմ վերոյիշեալ իրողութիւնը, ի շարս միւս եւ յաջորդ հարուածներուն որ պիտի նշեմ քիչ ետք: Պատմականօրէն ընդունելի իրողութիւն է նաեւ թէ ընկերավարական կանոնագրով եւ ծրագրով գործի լծուած Հնչակը, ոգեւորութեամբ ընկալեց ծայրայեղ ընկերավարութեան, համայնավարութեան, յաղթանակը Ռուսաստանի մէջ (1917), եւ Սովետական կարգերու հաստատումը Հայաստանի մէջ (1920): Այսպիսի ոգեւորութիւն եւ խանդավառութիւն սուղ արժեքին Հնչակին, որ յետ-եղեռնեան շրջանին, արեւմտահայ տեղահան եղած մեր ժողովուրդին հետ կ'ապրէր հակասովետ դրամատիրութեան եւ գաղութատիրութեան (Անգլիական եւ Ֆրանսական) հոգատարութեան տակ դրուած Մի-

ջին Արեւելեան (Լիբանան, Սուրիա, Պաղեստին, Իրաք, Եգիպտոս) երկիրներու մէջ: Սովետ Միութեան ջատագով Հնչակը, եւ Արաբ ազգային ազատագրական պայքարի ընկեր Հնչակը, դառնալով գաղութատիրութեան դէմ պայքարի Արաբ ազգայիններու սերտ գործակիցը, հալածուեցաւ եւ բանտարկուեցաւ գաղութատէր իշխանութեան կողմէ, որու պատճառաւ կարգ մը համակիր կամ շարքային Հնչակեաններ դէպի աջ գացին եւ դարձան չէզոք կամ Ռամկավար, եւ կարգ մըն ալ դէպի ձախ գացին եւ դարձան համայնավար: Այս ընթացքին, ազգային երկրորդ կուսակցութիւնը, Դաշնակցութիւնը, որ սովետներու կողմէ իշխանագրկուած էր Հայաստանի մէջ, բնականօրէն դարձաւ գործակիցն ու դաշնակիցը հակասովետ գաղութատիրութեան, եւ հոն ուր Հնչակը հալածուելով տկարացաւ, Դաշնակը՝ հակասովետ գաղութարար պետական նեցուկէն օգտուելով զօրացաւ: Այս վիճակը եւ իրողութիւնը պիտի կոչեմ Հնչակեանութեան զանգուածային ներկայութեան դէմ հարուած թիւ երկու: Նոյնպէս, Ամերիկահայ Հնչակն ալ, Ամերիկայի գործարաններուն մէջ գործելով եւ աշխատելով որպէս բանուոր կամ գործաւոր, եւ հետեւելով իր ընկերավարական հաւատքին, մասնակից դարձաւ աշխատաւորական շարժումներու (Unions) եւ հոն ալ խստօրէն հալածուեցաւ տեղական դրամատիրութեան կողմէ: Դժուար եղաւ Հնչակին գործ պահել եւ նիւթապէս ինքնաբաւ ըլլալ Ամերիկայի մէջ: Այս մէկն ալ պիտի կոչեմ հարուած թիւ երեք: Հնչակի ընկերավարական կերպարը հարուած ստացաւ նաեւ Սովետական ու համայնավար հայէն, որ գինք նկա-



տեց փոքր պուրժուա (Petit Bourgeois) եւ անոր լուծարքը պահանջեց Ամերիկայի տարածքին գործող եւ Սովետ շահեր հետապնդող Հայ Օգնութեան Կոմիտէ (ՀՕԿ)-ի մէջ: Այս մէկն ալ պիտի կոչեմ հարուած թիւ չորս:

Եւ մինչ Դաշնակցութիւնը կը զօրանար վայելելով թիկունքը դրամատէր իշխանութիւններուն որոնք կ'իշխէին սփիւռքահայութեան բնակութիւն հաստատած երկիրներուն վրայ, եւ որոնք անողք պայքար կը մղէին Սովետ Միութեան դէմ, Հնչակեանութիւնը աջէն (Դրամատիրութիւն) ու ձախէն (Սովետ Միութիւն) եկած հարուածներով կը տկարանար «կաթիլ առ կաթիլ»:

Եւ մինչ դրամատէր գաղութատիրութիւնը իր դէմ բարձրացող ձայները լռեցնելու միջոց կը փնտռէր եւ իր գործակիցներուն հետ միշտ հեշտութեամբ կը վարուէր, եղբայրասպան հարուածներով կը լռեցուէին ձայները Հնչակուսուցիչին, մտաւորականին, հասարակական գործիչին ու խմբագ-

Շար.ք էջ 18

ԴՆՉԱԿԵԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԵՓՐԱՏ ԳՈՒԼԵՃ»

ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մայր կուսակցութեան հիմնադրութենէն հարիւր քսան հինգ տարիներ ետք, տակաւին կայ մեծ երեւոյթ մը մեզ այդքան ոգեւորող եւ հպարտացնող, յուսադրող եւ խանդավառող, սերմնացանը մեր համոզումին եւ գաղափարաբանութեան. - «Մեր աչքառու մտաւորականներն ու խիզախ Հնչակեան հերոսները»:

Այս տարուայ ընթացքին շատ պիտի անդրադառնանք մեր կուսակցութեան պարծանքը հանդիսացող մեր մտաւորականներու անսակարկ նուիրումին եւ մեզի թողած ժառանգին մասին, յիշատակութեան արժանի դարձնելով նաեւ այն բոլոր ազգակիցները եւ զարգացման աղբիւրները որոնք մեծ խթան հանդիսացած են անոնց ապագայ գաղափարական եւ յեղափոխական մաքառումներու մարտադաշտին մէջ:

Հնչակեան պատմութեան հարուստ էջերուն մէջ իր կարեւոր տեղը կը գրաւէ Եփրատ Գոլէճը, ուր, մինչեւ 1908 թուական եւ մինչեւ թրքական սահմանադրութիւն, աղջկանց եւ տղայոց բաժնի բոլոր կարգերու բանիբուն ուսանող-ուսանողուհիները եղած են Սոցիալ Դեմոկրատ Հնչակեանները:

Եփրատ գոլէճը Հնչակեան կուսակցութեան նորացողը ռեժիմը բուրժուատանն էր, որու սերմնացանն էր խարբերդի Յեղափոխական Նահատակ անձնաճակատի Յաբէթ Յակոբը:

Այս գոլէճի ուժը հանդիսացող ղեկավար մարմինը, իր շրջապատի ուժերուն հետ, կը կոչուէր Անդր-Տաւրոսեան վարչական խորհուրդ, տանը հինգէն-տասը եօթ խմբապետներով: Համալսարանական շրջահայեաց Հնչակեան ուսանողներ էին անոնք, տեղեակ քանի մը լեզուներէ, որոնց համար սակայն ամենակարեւորն էր հայն ու հայրենիք սիրել, կուսակցական «տիւսիբիլի» յարգել եւ միշտ անձնագործ ըլլալ:

Անդր-Տաւրոսեան վարչական խորհուրդին տակ կու գային նաեւ Ամերիկեան Որբանոցի խումբերը՝ վեց օժանդակ խումբերով, Գերմանական Որբանոցի երկու խումբերը. Թլկատինցիի դպրոցի ուժը. Վարի-Թաղի խումբը, Խոյսը, Խոյլուն, Փէրչէնճը, Քօրբէն, Աշուանը, Խուլագիւղը եւ Կարմրին:

Անդր-Տաւրոսի վարչական խորհուրդի պատուական խորհրդատուներէն մէկը՝ նահատակ ընկ. Յարութիւն Սէմէրճեանն էր: Ընկեր Յարութիւնը եւ իր արժանաւոր ընկերուհի Տիկին Մարօն, թէեւ զարհուրալից շարչարաններու ենթարկուեցան, բայց մնացին անկուծ մինչեւ վերջ:

Եփրատի ուժը թէեւ դժուարին պայմաններու տակ, սակայն շատ նուրբ միջոցով մը իր յարաբերութիւնը կը պահէր Փարիզի կեդրոնին հետ: Ամէնուն ծանօթ Չարամանճազի Քիւչիւկ Խաչմանը բացառիկ միջոց էր, Միսիոնարներու անունով Փարիզէն եկած նամակ-



Եփրատ Գոլէճի ուսանողներու խումբ մը - 1908

ները մասնաւոր անձանց տալու:

Եփրատ Գոլէճի հաստատութիւններու բոլոր դռները Սոցիալ Դեմոկրատ ուժին առջեւ բաց էին, վասն զի աչքառու, գործ վստահ ու լիք բոլոր տղաքը կուսակցական էին:

Եփրատի ուժին անուղղակի ազդեցութեան տակ էր Աշուանի վարժարանը: Այդ վարժարանը ուսանողներու նուէրներով բացուած էր, որուն վարժապետն էր Մշեցի մեր ընկերներէն՝ ընկեր Պաղտասարը, որ շատ նախանձելի դրութեան տակ դրած էր գայն, տարիներու իր աշխատանքով:

Յետագային եօթանասուն նոր անդամ անդամուհիներ կ'աւելնան Եփրատի ուժին: Անոնք շատ աշխոյժ կը գործեն եւ Հայաստանի հայ եւ օտար հաստատութիւններու ամենա- աչքառուն կը դառնան:

Անդր-Տաւրոսեան Գունդը կը մնայ յիշատակելի եւ անմահ, իսկ անոր պատմութիւնը Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան պատմութեան լաւագոյն մէկ հատուածը կազմող եւ հիացում գրաւող իրական մէկ հոյակապ կատարումը: Խանձուած հոգուով եւ

Շար.ք էջ 18

ԱՐԱՔԱՆ ԾԱՏ Է ՏԵՍԵԼ, ԾԱՏ ԲԱՆ ԳԻՏԻ

ՍԱՄՈՒՔԷԼ ԿՈՍԵԱՆ

Արդեն քանի ամիս է աշխարհը սպասում է ԱՄՆ-ի ու Իրանի միջեւ հակամարտութեան ելքին, հակամարտութիւն, որն աւելի սրուեց, երբ աշխարհի լրատուամիջոցները տարածեցին Ատոմային էներգիայի միջազգային կազմակերպութեան /ՄԱԳԱՏԵ/ Իրանի մասին գեկոյցը, որում նշուած էր, իբր Իրանը մօտ է միջուկային զէնքի ստեղծմանը: ԱՄՆ-ի կողմից Իրանի դէմ ռազմական գործողութիւնները սպասուած էին անցեալ տարուայ Դեկտեմբերի 25-ից: Ու չնայած պատերազմական գործողութիւնների բացակայութեանը, այդուհանդերձ, կրքերը Իրանական միջուկային ծրագրի շուրջ ոչ միայն չեն դադարում, այլևս գնալով աւելի խորանում եւ ազդեալը դրսեւորումներ են ցուցաբերում: Իրանը որքան էլ փորձում է համաշխարհային հանրութեանը համոզել, որ երկիրը միջուկային զէնք ստեղծելու մտադրութիւն չունի, որ իրենց միջուկային ծրագրերը միտուած են միայն խաղաղ նպատակների, միեւնոյն է, անհնար է թուում ԱՄՆ-ի ու Իսրայէլի կողմից աշխարհին պարտադրուած անվտանգութեան պատնէշի յաղթահարումը: Վերջերս Լատինական Ամերիկայում շրջապատութեան ժամանակ Իրանի նախագահ Մահմուդ Ահմադինեժադը շարունակում էր շեշտել, որ իր երկիրը «խաղաղ» ատոմի կողմնակից է, սակայն նրա հաւաստիացումները նախկինի պէս ի վիճակի չեղան մեղմացնելու լարուածութիւնը, առաւել եւս խաղաղ բովանդակութիւն հաղորդելու հակամարտութեանը: Այս առումով, ըստ էկվադորի նախագահ Ռաֆայէլ Կարբերայի. «Իրանի միջուկային զէնքի ծրագրի առիթով ԱՄՆի յայտարարութիւնները նոյնն են, ինչ Իրաքի պարագայում էր, որն էլ Իրաք ներխուժելու պատճառ դարձաւ եւ մէկ միլիոն կեանք խլեց: Ինչպէ՞ս կարելի է վերջին շրջանի թարմ պատմութիւնից դասեր չքաղել»: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ անցեալի դասերը հրաշալի ու կիրառելի են միայն տեսութեան մէջ, իրականում ժամանակի հզօրները միշտ էլ առաջնորդուել են ոչ թէ սթափ բանականութեան, այլ շահի թելադրանքով: Ասուածի լաւագոյն օրինակը մոլորակի վրայ շարունակուող պատերազմներն են: Այն տպաւորութիւն է, որ ոչ միայն մարդկութիւնը, այլևս աստուածներն են դարձել շահի հպատակները: Այլապէս անհասկանալի ու անբացատրելի է ԱՄՆ-ի շահագրգռութիւնը՝ ժողովրդավարութիւնը տարածել աջակիսի երկրներում, ինչպիսիք են Իրաքը, Աֆղանստանը, Փաքիստանը եւ հիմա էլ Իրանը... Նոյնն է, եթէ փորձես կրիային թուշել սովորեցնել... Չի թուել ու չի թուշելու: Արաբական երկրներում ծայր առած ընդվզումները, որոնք Արեւմուտքը շտապեց ժողովրդի ազատ կամքի դրսեւորում կամ ժողովրդավարական զարթոնք որակել, ի վերջոյ աւարտուեցին կամ կ'աւարտուեն իսլամական ուժերի աշխուժացմամբ, որոնք այդ երկրներում աւելի ու աւելի են ընդարձակում իրենց ազդեցութիւնների ոլորտը: Կասկած չկայ, որ վերջնական յաղթանակից յետոյ նրանք իրենց պատկերացրած ազա-

տութիւններն ու իրաւունքներն են շրջանառելու եւ հազիւ թէ համաձայն են իսլամի բարոյական արժէքները Արեւմուտքի կողմից պարտադրուած ժողովրդավարութեամբ փոխարինել:

Ու պիտի համակերպուել նրանց ընտրութեան հետ, շփման եզրեր գտնելով իսլամական եւ ժողովրդավարական կենսաձեւերի միջեւ, առաջնայինը համարելով բարի դրացիութիւնն ու փոխ շահաւէտ համագործակցութիւնը: Հակառակ պարագայում առձակատուները վերանայու փոխարէն խորանալու են, մեծացնելով մարդկային ողբերգութիւնների տրամագիծը:

Թերեւս ամերիկա-իրանական հակամարտութիւնը նման առձակատուների շարքին պիտի դասել, երբ համբերատար, երկու կողմերի համար հաւասարազօր բանակցութիւնների փոխարէն, ռազմական ուժի կիրառումն է խնդրի լուծման բանալի ընտրուած: Առայժմ ռազմական միջամտութիւնը ոչնչի չի հանգեցրել ո՛չ Իրաքում, ո՛չ Աֆղանստանում, ո՛չ Լիպիայում եւ, ամենայն հաւանականութեամբ, գերոյական արդիւնք կը գրանցի նաեւ Իրանում:

Պատահական չէ, որ ի պատասխան իսրայէլամերիկեան սպառնալիքների, Իրանը իր կողմից սպառնում է փակել Հորմուզի նեղուցը, որով անցնում է եվրոպա հասնող էներգակիրների 40 տոկոսը, իսկ նոյն Լատինական Ամերիկայում Մահմուդ Ահմադինեժադը յայտարարում է, որ.

«Իրանի ժողովուրդը պատրաստ է տոկոս լինել եւ արժանի պատասխան տալ ամերիկացիներին, որ ուզում են անհանգստացնել, վնասել եւ հարուածել Իրանի ժողովրդին»: Պայծառատես պէտք է լինել, հասկանալու համար, ինչ ողբերգական հետեւանքներով են յղի ռազմական գործողութիւնները:

Պահենք, պահպանենք մեր սրբասուրբ աւանդոյթները եւ գօտեպնդուենք Յիսուս-Քրիստոսի մաքրամաքուր հաւատքով, որն երաշխիքն է մեր գոյատեւումին:

Թող մեր նշանաբանը լինի անլուելի եւ անկրկնելի Պարոյր Սեւակի հայրենաբոյր այս տողերը. Աւարայրից ջանք առանք, Այստեղ մի պահ կանգ առանք, Որ շունչ առած շունչներս տանք Սարդարապատի պատի տակ:

Բայց մենք չընկանք, մենք միշտ կանք,

մենք չհանգանք, դեռ կը գանք Երբ տան գանգը, ահագանգը, Որ մեր հոգու պարտքը տանք:ս

ԱՐԾԻՒՆ ԱՄԱՐԱՅՐԻ ՎԱՐԴԱՆ ՇԱՄԻՐԵԱՆ

Հագած գրահ արին Իշխան, Իջու կռուի դաշտն արեան, Յանուն ազգի ու կրօնքի, Արծիւը քաջ Աւարայրի

Մարտնչելով քաջ ու խիզախ, Թշնամու դէմ անյաղթ, անվախ, Արիաբար ընկաւ, մեռաւ, Արիների արին Վարդան:

Խորէն, Վահան, քաջն Արտակ, Տաճատ, Արսէն եւ Զմայեայկ

Պսակեցին կուրծքը հողի Իշխանները հայոց երկրի:

Թողած աւանդ մեր սրբազան, Ընկան, մեռան, բայց չկորան, Սուրբ կրօնքի, ազգի համար, Վառ յիշատակ նրանց անմար:

Որպէս վկայ այն սեւ օրի, Վերքի, ցաւի, սուգ ու լացի, Այն աղէտի վիշտը սրտում, Դեռ Տըղմուտն է տխուր հեծում:

ԳՈՎՔՆ ԱՄԱՐԱՅՐԻ Ն. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Գովերգում եմ ես Մեծ Աւարայրը հերոսապատում ու պայքարը մեր վսեմ, պանծալի Ու երբ թերթում եմ Մեր պատմութիւնը, Ամէն մի էջը լուսէ Աւարայր. ու հերոսական դրուագներով լի, Ամէն մի տողը ապրելու տենչանք, Շքեղ, պանծալի... Գովերգում եմ ես մեր հերոսներին,

Որ ընկան անահ, վասն հայրենեաց, Վասն կրօնի... Վասպուրականը մի նոր Աւարայր, Սարտարապատը լուսեղէն պսակ, Բաշապարանը մի նոր փորձաքար Իմ ժողովրդի... Գովերգում եմ ես մեր հերոսներին Երէկուայ, վաղուայ, անցած ու գալիք Աւարայրներին...

ՓԱՌՔԸ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Ն. ՏԵՐԵԱՆ

Վարդա՛ն, Դու թռիչք աստուածային, Դու փառք երկնային, Դու հողեղէն մի աստուած, Զրաջագործ մի մարմին...

Վարդա՛ն, Ընկար, որ գալիք սերունդները երգեն Քո փառքը արարչական, Բազուկդ պողպատածոյլ, Ու մետղ արծուաթռիչք.

Դու ցասում ահեղագոռ Ու հարուած անդաւաճան, Սուրբաւանդիին-հինդարե-րից, Դու բողոք ընդդէմ չարի, Դու շանք շլացնող, հրածին...

Դու կաս, կը մնաս որպէս Փառքի գագաթ մեր պատմութեան:

ՎԱՐԴԱՆԻ ՊԷՍ ԱՐՇԻ
Վարդանի պէս հաւատքով լի, Վարդանի պէս հուր ու հօր, Կանգնիր, որդիս, դու՛ն անկու՛մ, Խաչդ բռնած ամենագոր:
Քո քաջերի սուրբ խօսքերից Սի բառ միայն պահիր պատգամ,

Գիտցիր, որ դու մեծ ես եղել՝ Մեծերի դէմ ամէն անգամ:
Եւ դարերի շարանների՛ն Նետիր սիրտդ աստուածակերտ, Զոգիդ յաւէտ պիտի գգայ, Որ կանգուն է դեռ հայոց բերդ:

Զեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680
F: (626) 797-6863 massis2@earthlink.net

2011-ԵՐԵՒԱՆԵԱՆ ՕՐԵՐ

ՎԱՀԱՆ ԲԱՀԱՐԵԱՆ

2. ԵՐԲԵՄՆԻ ԵՌՈՒՋԵՌՈՎ ԱՊՐՈՂ ԿՈՄՊԼԵՔՍԸ ԱՒԵՐԱԿ ԴԱՐՁԱԾ

1978 թ. աշխատանքից դուրս գալու ու Ամերիկա տեղափոխուելու կապակցությամբ ինձ բնութագրի տրուեց աշխատանքի տեղից՝ էլեկտրամեխանիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի Երեւանի բաժանմունքից (), Շրջկոմ ներկայացնելու համար: Բնութագրի պատճեն չէի պահել: Այն ժամանակ ինստիտուտն ունէր մէկ 5 յարկանի շէնք, որի կառուցումն աւարտուեց 1977 թ.: Կառուցման ժամանակ ինստիտուտի աշխատողներս մասնակցեցին քչինարարական աշխատանքներին շաբաթօրեակներով (շաբաթ օրերը ձրի աշխատելով, որը կիրարկւում էր ԽՍՀՄ-ում): Յետագայ տարիներին, իմ բացակայութեան ժամանակ, այդ շէնքին կից կառուցուել էր եւս երեքը, եւ 1994 թ. ինստիտուտը վերանուանուել էր էլեկտրամեքենաշինութեան նախագծա-կոնստրուկտորական եւ տեխնոլոգիական գիտահետազոտական ինստիտուտ (ԷԼԵԿՏՐԱՄԱՇ)՝ 960 աշխատողներով: 2002-ին իմ այցելութեան ժամանակ այցելեցի այդ համալիրը, որն իր եռուզեռով

տուտի հիմնադրման թուականից՝ 1969-ից կոնստրուկտիվ հակայական արխիւը, որն ո՞վ գիտի որքան կարեւոր փաստաթղթեր էր պարունակում իր մէջ, ուղղակի թափել ու վառել են: Արդեօ՞ք սա ոճրագործութիւն չէ: Իսկ գլխաւոր շէնքի աղբանոց ներկայացնող մուտքի առջեւ կանգնած մի քանի հոգուհետ գրուցելիս պարզուեց, որ երբեմնի գիտական կենտրոնը սպասում է հերթական թալանչի օլիգարխին, նրա կողմից շահագործուելու...:

Կարծում եմ սա միայն մէկն է այն կոպւլեքաներից, որոնք ողբալով իրենց ներկայ վիճակը, սպասում են շնչելուն...:

3. ԵՐԵՒԱՆԵԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Երկար տարիների բացակայութիւնից յետոյ, երբ Երեւանում յայտնուեցի քրոջս տանը, բնակարանում նկատեցի որոշ փոփոխութիւններ՝ խոհանոցի հին պահարանները փոխարինուած էին նոր կահաւորանքով, բայց դեռ անելիք կար: Բաղնիք-զուգարանում խորհրդային շրջանից մեր ունեցած լուսացի մեքենան այլեւս չկար (այն օգտագործուեց աւելի քան 50 տարի), քոչրս իր տարիքի 80-ամեայ շեմին եւ անառողջ վիճակում լուսացիքը ձեռքով էր անում: Ինձ ուրա-



Ձախէն աջ՝ Արփիմէ Ասլանեան, Վահան Բահարեան, Շողեր Ասմարեան եւ Ղարիբ Եղիազարեան

Հայէլեկտրագործարանում: Ես գնեցի այն 1967 թ., օգտագործեցի մինչեւ 1978 թ. եւ իմ Ամերիկա տեղափոխուելու կապակցությամբ թողեցի քրոջս: Նրա տարողութիւնը մեծ չէ. զբաղեցրած յատակի մակերեսը 0.37 քառ. մետր է, սառեցման խցի տարողութիւնը՝ 200 լիտր, սառեցման բաժանմունքի (գոլորշացուցիչի) տարողութիւնը՝ 28 լիտր, դարակների ընդհանուր մակերեսը՝ 1 քառ. մետր, օգտագործուում է (սառեցման համար) սառնակեմտ ֆրիոն-12: Երեւի ընթերցողը պատկերացում կազմեց դրա մեծութեան մասին: Սառնարանի կոմպրեսորը ճափոնական է: Սառնարանը մինչեւ հիմա՝ 44 տարի է աշխատում է անխափան, ոչ մի անգամ ոչ մի մաս չի փճացել, իսկ այն արտադրող արտադրամասը վաղուց գոյութիւն չունի:

Այս կապակցութեամբ ընթերցողին չի շեցնեմ մի քանի տասնեակ տարիներ առաջ հեռուստացոյցով

ցուցադրուած 600 հազար մայլ վարած վոլկսուազենը կլինտէլում, որի տիրոջը մեքենան արտադրող գործարանը նոսի-նոր վոլկսուազեն նուիրեց: Ամերիկայում արտադրուող կենցաղային սարքերի կեանքը քանի՞ տարի է...:

Քրոջս շէնքին համարեա կից, Վրացական փողոցի եզրին կայ Անդրանիկ գորավարին նուիրուած մի յուշարձան: Ազգային ժողովի պատգամաւոր Ջարուհի Բոստանջեանի ծնողների սեփական տունը քրոջս շէնքից բաժանուում է քարէ պատով: Այժմ մայրն է ապրում այնտեղ եւ Ջարուհին երեխաներին յաճախ է բերում տատի մօտ: Երեւան քաղաքի Երրորդ մասից (մեր ապրած շրջանն է մինչեւ Ամերիկա տեղափոխուելը) ինչ որ օլիգարխ որոշել է նշուած փողոցի այդ մասում զարեջրի կրպակ տեղադրել, որը բնականօրէն խանգարելու



Անդրանիկ Զօրավարին նուիրուած յուշարձանը

հիացմունք պատճառեց ինձ: 2011-ին, երբ նորից այցելեցի այն, վերոնշեալ փաստաթղթի պատճեն ունենալու յոյսով, չճանաչեցի: Կարծէք թէ համալիրը երկրաշարժից կամ պատերազմից աւերակ էր դարձել: Դռները, պատուհանները ջարդրտուած, պատուհանների ապակիները փշրուած, շէնքերը՝ ներսերը փոշու մէջ կորած, անտէր անտիրական, ողբում էին իրենց նոր կեանքը երբեմնի եռուզեռի փոխարէն, որտեղ ժամանակին աշխատում էին բարձրակարգ ինժեներներ եւ մասնագէտներ, որոնք որքան բարիք էին բերում հայրենիքին: Իսկ այսօր, անկախութիւնից 20 տարի անց, աւերակների վերածուած շէնքերից միայն մեկում՝ նախկին արտադրական տեղամասի շէնքի երկրորդ յարկի անմխիթար, շատերի դռները կոտրտուած ու բաց սենեակներից մի խղճուկ սենեակում պատահական հանդիպեցի նախկին բարգաւաճ ինստիտուտի դիրեկտորի տեղակալին, որն ինձ օղի հիւրասիրեց ու հետս գրուցելիս նշեց, որ մի քանի աշխատողով, ինչ-որ սարքաւորումներ են արտադրում: Ինստի-

տուտի վրայ պատճառեց պատի դագի նոր ջեռուցիչը, որը վաչրկեաններին ընթացքում տաքացնում է ջրը՝ լողանալու ու խոհանոցում օգտագործելու այն: Խոհանոցի լուսացարանը փտել էր, այն պէտք էր փոխուել եւ նոր լուսացի մեքենայ գնել: Բայց քրոջս համոզելը դժուարացաւ: Մարդուն դժուար է համոզել հրաժարուել հնուց եւ օգտագործել առաջադիմականը: Նշեմ, որ քրոջս բնակարանի նորարարութիւնների հեղինակը հարեւան Լիովան է, որն իր ընտանիքով երկար տարիներ շփուելով քրոջս հետ, մի ընտանիքի նման են: Ես ու Լիովան համոզեցինք քրոջս եւ լուսացարանը փոխեցինք: Մի քանի օրուայ դժուարութիւններից յետոյ նա վարժուեց դրան, բայց նոր լուսացի մեքենան տեղադրուեց միայն իմ Լոս Անճելոս վերադառնալուց յետոյ. Լիովան համոզել էր քրոջս եւ քոչրս գոհ մնաց: Քրոջս «Արագած» մականիչի սառնարանը կարելի է հնութիւն (անտիկ) համարել: Սկսած 1960-ականներից, այն արտադրուում էր Երեւանի Աշխատանքային կարմիր դրօշի շքանակակիր Վ. Ի. Լենինի անունան

Հայերապիս
ԽՐԱԽՃԱՆՔ
tu
ՉՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԾԻՒՂԻ

Շաբաթ, 25 Փետրուար 2012
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 North Allen Avenue
Pasadena, CA 91104



Տոմսերու համար դիմել՝ (818) 913-4024
ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$25.00

ՍԱՆԹԱ ԳԼԱՐԻԹԱՅԻ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՅԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՕԾՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐԸ

Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցույ Օծման Երկրորդ Տարեդարձի Տօնակատարութիւնը՝ Եկեղեցույ Անուանակոչութեան Տօնին առթիւ, Առաջնորդ Սրբազան Հօր Նախագահութեամբ, Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանի, Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քհնյ. Յակոբեանի, Արժ. Տ. Խաթակ Քհնյ. Շահապետեանի, Արժանթիւնի Հայոց Թեմին հիւրաբար Արեւմտեան Թեմը այցելող Հոգւ. Տ. Մաղաքիա Աբեղայ Ամիրեանի եւ Արժ. Տ. Երեմիա Քհնյ. Խաչատրեանի եւ ի ներկայութեան մեծ թիւով հաւատացեալներու, Շաբաթ, Փետրուար 4ի երեկոյեան Թահանկա Քաղաքի The Great Caesar Banquet Hall-ի մէջ տեղի ունեցաւ Խորհրդանշանաւոր ծաղկերոյթը:

Օրուան հանդիսավարներ՝ Մելիա Թապաքեան եւ Ուիլիամ Սիմոնեան ի սրտէ բարի գալուստ մաղթեցին Առաջնորդ Սրբազան Հօր եւ յարգարժան հիւրերուն: Սեղաններուն օրհնութիւնը կատարեց Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեան: Բարեբաստիկ այս առիթով, յաջորդաբար իրենց սրտի խօսք ուղղեցին Ծիակաւան Խորհուրդի Ատենապետ՝ Մանօ Մէքիւնեան, նախկին Ծիակաւան Խորհուրդի Ատենապետ եւ ներկայիս Ծիակաւան Անդամական Ժողովի Ատենապետ՝ ճան Թունկայեան, Տիկնանց Միութեան Ատենապետ՝ Յասմիկ Թապաքեան եւ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեան: Տէր Հայրը իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ իր հայրական հոգածութեան շնորհիւ Ծուխը տիրացած էր Եկեղեցույ եւ համալիրի, ուր հաւատացեալներ իրենց աղօթքը կը մտուցանեն եւ մեր մատղաշ սերունդը կը դաստիարակուի Հայ Եկեղեցույ հաւատքով, հայեցի կրթութեամբ եւ հայրենասիրութեամբ: Ապա շնորհակալութիւն յայտնեց Թեմական Խորհուրդի Փոխ Ատենապետ՝ Տիար Պապ Պարսամին, Ծիակաւան Խորհուրդին, Տիկնանց Միութեան, յարակից բոլոր կազմակերպութիւններուն եւ համայն հաւատացեալներուն, իրենց մատուցած անձնուէր ծառայութիւններուն եւ զօրակցութեան համար: Եկեղեցույ »Հայաստան« Պարախումբը ղեկավարութեամբ Արմանի, հայկական աւանդական տարազներով՝ իրենց հեզաձկուն պարերով հրճուեցին:

Րով հրճուեցին պատճառեցին հանդիսականներուն:

Տեղի ունեցաւ պաշտօնական ճաշկերոյթ, որու ընթացքին Առաջնորդ Սրբազան Հայրը տուաւ իր ոգեշունչ պատգամը եւ առ ի գնահատութիւն Ծուխին ներս երկարամեայ նուիրեալ ծառայութիւն մատուցող Տիար Կարօ Գուրեանը պատուեց «Արքեպիսկոպոսի Մրցանակ»ով: Ինչպէս նաեւ որպէս գնահատութիւն Ծուխին ներս գանազան պաշտօններ վարած եւ անձնուէր ծառայութիւն մատուցող ճան Թունկայեանը, Լիտա Վահրամեանը, Ռաֆֆի Հատտատը, Այտա Էսքիճեանը, Մարալ Սապունճեանը, Յարութ Սողոմոնեանը եւ Տէր եւ Տիկին Արթուր եւ Ժողէֆիան Մաղաքեանը պատուեց «Օրհնութեան եւ Գնահատանայ Գիր»ով, շնորհաւորեց զիրենք եւ քաջալերեց, որ Տէր Հօր կողքին շարունակեն իրենց թանկագին ծառայութիւնները եկեղեցին աւելի պայծառացնելու եւ զօրացնելու համար: Սրբազան Հայրը ողջունեց Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանի ձեռնադրութեան կնքահայր՝ Տէր եւ Տիկին Հերոս եւ Անահիտ Քաջբերունին, ինչպէս նաեւ Թեմական Խորհուրդի Փոխ Ատենապետ Տիար Պապ Պարսամին ներկայութիւնը:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՍԱՐԳԱՒԱԳԱԿԱՆ ԶԵՆՆԱՂՈՐՈՒԹԻՒՆ

Սուրբ Սարգիս Զօրավարի Տօնին եւ Սանթա Գլարիթայի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցույ Անուանակոչութեան առթիւ, Կիրակի, Փետրուար 5ի առաւօտեան Առաջնորդ Սրբազան Հայրը Սուրբ Պատարագ մատուցեց եւ քարոզեց: Սուրբ Պատարագի ընթացքին Սրբազան Հայրը Սարկաւագ ձեռնադրեց եկեղեցույ մէջ նուիրեալ ծառայութիւն մատուցող Սուրբ Ներսիսեանը: Սրբազան Հայրը գնահատեց անոր մատուցած ծառայութիւնները եւ յորդորեց, որ վերանորոգուած հաւատքով եւ նոր ոգեւորութեամբ շարունակէ իր հոգեւոր ծառայութիւնը:

Սուրբ Պատարագի աւարտին եկեղեցույ սրահին մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, ուր հաւատացեալները առիթը ունեցան անձամբ ողջունելու Առաջնորդ Սրբազան Հայրը եւ արժանանալու իր օրհնութիւններուն:

ԼՈՒԻՏԵՐ ՍՓԻՒՌԸ

ԹՈՒՐՔԻԱ

TARAF ԹԵՐԹԻ ՅԱՅ ԼՐԱԳՐՈՂԻ ԴԵՌՈՒՍՈՍԱԶՐՈՅՑՆԵՐԸ ԿԸ ԳԱՂՏՆԱԼՍՈՒԻՆ

Թուրքիոյ ազգային հետախուզութեան ծառայութիւնը (MIT) 2008 թուականին ի վեր կը գաղտնաւէ Taraf թերթի գլխաւոր խմբագիր Ահմէտ Ալթանի, իր տեղակալ Եասմին Չոնգարի եւ համակարգող Մարգար Եասյեանի ու այլոց հեռախօսազրոյցները:

MIT-ի ցուցակին մէջ Մարգար Եասյեանի անունը նշուած է որպէս վահան եւ Հոպին Սէֆուլահ:

Նշենք նաեւ որ Taraf թերթի լրագրողները Թուրքիոյ մէջ հայոց ցեղասպանութիւնը ճանչցող եզակի լրագրողներու ցանկին մէջ են եւ պարբերաբար կ'անդրադառնան այդ խնդրին:

ՖՐԱՆՍԱ

ԳՐԻԳՈՐ ԱՄԻՐՉԱՅԵԱՆԻ ՅՈՒՑԱՅԱՆԴԵԱԸ

Փետրուարի 24-26 Ֆրանսայի Վալանս քաղաքին մէջ տեղի պիտի ունենայ Գրիգոր Ամիրգայեանի ծաղրանկարչական աշխատանքներու ցուցահանդէսը: Սոյն միջոցառումը կազմակերպուած է վեթերաններու «Հայաստան» Միութեան կողմէ: Գ. Ամիրգայեանը Հայաստանի ներկայացուցիչն է Ծաղրանկարչներու Միջազգային Միութեան մօտ: Ան անցեալ տարի, քսան այլ ծաղրանկարիչներու հետ, մասնակցեցաւ «Ծաղրանկարը յանուն խաղաղութեան» ցուցահանդէսին:

ԻՏԱԼԻԱ

ԳՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ԱՅՑԸ ԳՈՍՍԻ ՊԱՊԻՆ

Աշխատանքային այցելութեամբ Իտալիա գտնուող Հայաստանի Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան, Վատիկանի մէջ ընդունուեցաւ Նորին Սրբութիւն Հռոմի Պենտիկոնա 16րդ պապին կողմէ:

Իտալիոյ Հայաստանի դեսպան Ռուբէն Կարապետեանի, «Փիւնիկ» բարեգործական հիմնադրամի նախագահ Գաբրիէլ Զեմպերիի (Զեմպերիեան) ուղեկցութեամբ նախարար Յակոբեան այցելեց նաեւ Հռոմի Լեոնեան Հայկական վարժարանը: Այստեղ ան հանդիպեցաւ Հռոմի հայ համայնքի ներկայացուցիչներու, «Ռատիօ Վատիկան»-ի հայերէն հաղորդումներու անձնակազմի, ինչպէս նաեւ հոգեւորականներու եւ վարժարանի հայ սաներուն հետ:

Հրանուշ Յակոբեան Թրիէսթէ քաղաքին մէջ ներկայ եղաւ ցեղասպանութեան 100-ամեակի նուիրուած միջազգային համագումարին, ինչպէս նաեւ Թրիէսթէի գործարարներու եւ Հայաստանէն ժամանած գործարարներու մասնակցութեամբ կազմակերպուած հանդիպումին:

ԱՆԳԼԻԱ

BBC-Ի ՄՐՑԱՆԱԿԸ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻՆ

Անուանի կոմպոզիտոր Ալեքսանդր Յարութիւնեանի «Շեփոր» գոնսերդը՝ BBC միտիւն-Հոլտինկի կողմէ վերջերս արժանացած է «Դասական Երաժշտական արուեստի գանձ» անուանակարգի առաջին մրցանակին: Ասիկա ապացոյց մըն է որ հայ կոմպոզիտորի շեփորի համար կատարած ստեղծագործութիւնը աշխարհի լաւագոյններէն մէկն է: Արդարեւ, այս գործը նոր ստեղծագործութիւն մը չէ եւ ներկայիս ընդգրկուած է աշխարհի երաժշտական հաստատութիւններու ուսումնական ծրագիրներուն մէջ:

Այս առթիւ 92-ամեայ Ալ Յարութիւնեանը յայտնեց որ BBC-ի մրցանակը իրեն համար անակնկալ էր:

ԽՐՈՒՄԹԱ

ՅԱՅԿԱԿԱՆ ՅԱՄԵՐԳ ՏՈՒՊՐՈՎՆԻՔԻ ՄԵՋ

Վերջերս Խրուսթիոյ Տուպրովնիք քաղաքին մէջ տեղի ունեցած է համերգ մը Երեւանի կոմիտասի անուան քառեակի մասնակցութեամբ: Ասիկա իրագործումներէն մին է «100 համերգ նուիրուած հայոց ցեղասպանութեան գոհերու յիշատակին» նախագիծի ծրագրին: Արդարեւ սոյն նախագիծին համաձայն մինչեւ 2015 թուականը նախատեսուած է համերգներ իրականացնել բովանդակ աշխարհի տարածքին:

Հայաստանի մշակուցի նախարարութեան հաղորդագրութեան համաձայն, վերոյիշեալ համերգը տեղի ունեցած է Տուպրովնիք քաղաքի «Մալէ Բրաչէ» տաճարին մէջ, Սուրբ Վլասիի նուիրուած տարեկան հոգեւոր փառատօնի օրերուն:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՅԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ գնջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԵՋ (200 ՀՈԳԻ ՎԱՄԻ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՎԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104

ՄԱՆՐԱՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ԸՆՈՒՁԱՅՆԵԼ

(626) 797-7680

ԲԵՅԻՍՏՈՒՆԻ ՔԱՐԵՂԵՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՊՕՂՈՍ ԼԱԳԻՍԵԱՆ
(Շարունակում և մախրող թիւէն)

Բազում դարեր յետոյ, Պարսիկ մի ուրիշ թագաւոր, հայոց նախարարական տան իշխանի, նրան համախոհ տասնեակից աւելի նախարարների գորքի հետ ճակատամարտ պիտի մղէր հայոց բանակների դէմ, նրանց հարկադրելու պաշտամունք նուիրել աչն աստծոյն, որին ինքն էր պաշտում: Արմէն-հայ այդ իշխանը քայլում է յաւերժութեան ճամբաներով, ճակատին՝ «Դաւաճան» մակդիրը խարանուած: Զարմանալի, հաւատքից առաւել ազգին փառող մարդը, իրենց նոր հաւատքի փառաբանողների կողմից «Ուրացող» Դաւաճան» է յորջորջուել: Հաւատքը չէ ազգին, ցեղին բնորոշողը: Զրահադաշտական Պարսիկ, իսլամացած պարսիկը պարսիկ է:

Մամիկոնեան նախարարական տան վարդան գորավարներ հայոց գորքի հրամանատարը: Պարսկաստանի դէմ «Վասն հաւատքի» մարտ մղելու համար վարդանին Բիւզանդական մասի Տարօն գաւառակից հրաւիրել էին գլխաւորելու հայոց կռիւը պարսիկ բանակի դէմ: Աւատատէր դարձած Գրիգոր Լուսաւորիչի տոհմը տիրել էր Տարօն գաւառին: Նրա թոռ Սահակ Կաթողիկոսի դստեր գաւակն էր վարդանը, որ ժառանգել էր Տարօնը: Մարտերում չառնականացած աշխարհագոր հաւաքեցին, նամակ գրեցին պարսիկ արքային, «Քո սուրը եւ մեր պարանոցները»: Պարսից թագաւորը հրովարտակ էր ուղարկել հայոց աշխարհ, ներում էր նրանց: Սիւնեաց Բակուր նահապետի թոռ թոռ մարգպետ Վասակ իշխանը յորդորել էր չպատերազմել: Արտագու-Աւարայր դաշտ, սղմուտ գետի միւս ափին էին Վասակի ու իր համախոհների եւ պարսիկ թագաւորի գերագանց քանակով գորքը: «Մահ իմացեալ անմահութիւն է» ասացին: Ռագմագէտ, պարսիկ բանակում ու այլուր բազում յաղթական ճակատամարտեր մղած վարդան, փոխանակ պարսիկ գորքի դէմ հայոց լեռներում մարտեր մղելու, մահ սիրելու նրանց շարքերին, բաց դաշտում, նախապարձակ գետն անցաւ ասեղ կռիւ եղաւ մասնաւորապէս վարդանի ու Վասակի հայկական գունդերի միջեւ: Ընկաւ վարդանը: Վկայում են, պարսկական պատմութեան մատենաներում չի յիշատակուում վարդանանց կռիւը: Մար-

տի են գնում թշնամու պարանոցը հատել, թշնամու շարքերի մահ սիրել եւ ոչ թէ մահուան գնալ, ինչո՞ւ համար, անմահանալու համար: Եւ պատմիչները վկայեցին, որ «բարոյական» յաղթանակ են տարել, բարոյական յաղթանակ: Երբ պարսկական արքունիքում դատում էին հայոց նախարարներին, Ամատունի իշխանը արքային յայտնել էր, որ Վասակ իշխանը ցանկանում էր Հայաստանում թագաւորութիւնը վերականգնել: Արքան գայրացել էր, տարան նրա իր երկու գաւակների հետ եւ հայոց գահը թափուր պիտի մնար 4 դարեր:

Դարեհ իր արձանագրութիւնում տեղեկացնում է, որ իր բանակը հինգ ճակատամարտեր է մղել իր իշխանութիւնը չճանաչող արմէնների դէմ: Ճակատամարտերից երեքը արմէնները մղել են Դարեհի բանակի հրամանատար հայազգի գորավար Դադարչիչի դէմ, իսկ երկուսը պարսիկ գորավար Վառմիսայի դէմ: Դարեհը գրում է, որ արմէնները պարսիկ բանակի դէմ պատերազմ են մղել Արմինա երկրի Զուգա վայրում: Այդ կռուից քիչ ժամանակ անց արմէնները երկրորդ անգամ էին Արմինայում ճակատամարտել նոյն գորավարի դէմ: Ապա նորէն իրենց երկրում երրորդ անգամ ճակատել դարձեալ նոյն գորավարի դէմ: Այդ ճակատամարտերը մղուել էին Արմինայի ու Ատրեստանի սահմանի շատ մօտիկ վայրերում: Այդ հաստատում է որ, արմէնները համախումբ յաղթական մարտեր մղելով Պարսկաստանի դէմ, պարտութեան մատնել իրենց երկրի ներխուժած պարսկական բանակին եւ նրանց հալածելով աստիճանաբար դուրս վանել երկրից մինչեւ Ատրեստանի տարածքներ: Եւ, արմէնները Պարսկաստանի դէմ իրենց չորրորդ ճակատամարտը արդէն մղել էին Արմինայի սահմաններից դուրս՝ Ատրեստանի տարածքի վրայ, պարսիկ գորավար Վառմիսայի գլխաւորած բնակի դէմ: Ըստ արձանագրութեան, Դարեհի գորավար Վառմիսայի ղեկավարութեամբ, նորէն «Արմինա» ներխուժած Պարսկաստանի բանակը միայն հինգերորդ ճակատամարտում, իրենց կայսրութեան հսկայական միջոցներով կարողացել ճնշել արմէնների ապստամբութիւնը: Դարեհի դէմ ապստամբած երկիրը «Արմինա» չէր կոչուելու, եթէ այն իսկապէս «Արմինա» (Արմինիա) ու «Արմանի» անունով երկիր եղած չլինէր: Յի-

շել Մովսէս Խորենացու թանկագին վկայութիւնը՝ «Ամենայի ազգաշխարհս մեր անուանեն որպէս Յոյնք՝ Արմէն եւ Պարսիկք ու Ատրիք՝ Արմենիք: Դարեհի գրագիրը հաւանաբար եղել է արամէնագէտ կամ արամէնացի, որոնք իրենց գրութիւններում բառամիջի ձայնաւորները չէին գրել: Արձանագրութիւնում մի քանի անգամ յիշատակուած «Արմնի» անուան «մ»ն տառերի միջեւ չկալ «ա» տառը: Այն պէտք է կարգել՝ «Արմանի»: Պարսիկները մինչեւ այժմ թէեւ գրում են «Արմնի» սակայն այն հնչում են եւ գրում են «Արմանի»: Այն, արմէնների Արմանի երկիրն էր եւ մինչեւ մեր օրերի շատ տարածուած «Արման» անունը, իրենց էլ «Արմա» արեւորդիների իրենց կոչել:

Բեհիստունի արձանագրութիւնում յիշատակուել է նաեւ Արախա անունով մի Արմին (Արմէն-Արման)՝ Խալդիտայի որդին, թագաւորը Բաբելոնի: Այսպէս էր Դարեհը գրել՝ «Երբ ես Պարսկաստանում ու Մարաստանում էի, Բաբելոնացիները երկրորդ անգամ ապստամբեցին իմ դէմ, մի մարդ, Արախա անունով մի արմին, Խալդիտայի որդին, ապստամբեց Բաբելոնում: Դուբալ կոչուած մի վայրում նա ստեց ժողովուրդին (ասելով). «Ես Նաբուգոդոնոսորն եմ՝ Նաբոնիտոսի որդին»: Ապա Բաբելոնի ժողովուրդը ապստամբեց իր դէմ եւ Արախայի կողմը բռնեց: Նա գրաւեց Բաբելոնը: Նա դարձաւ թագաւոր Բաբելոնում»:

Դարեհ վկայել է, որ Արախայի հօր անունը Խալդիտա էր: Արմինա-Ուրարտուի ազգային գերագոյն աստուած խալդիտան էր, կազմուած Խալդիի անունից: Դարեհը նրան յիշատակել էր 520 թուականին, Ուրարտուի անկումից (590-585) յետոյ: Ըստ այդ տարեթուների, Արախայի հայրը ապրած պիտի լինէր «Ուրարտու» ժամանակ եւ այդ Արմինը իր որդուն անուանել է իրենց աստուած Խալդիի անունով:

Այդ Արմինը «Արմինա Ուրարտու» չէր հարազատ գաւակն էր, այնտեղ ներխուժած, մեղացիների հետ իրենց երկիրը կործանած ցեղի մարդ չէր, եթէ այդպէս եղած չլինէր նրան Խալդիի աստուծոյ անունով Խալդի-տա չէին կոչել: Այդ արմին-հայր, Արմինա-Ուրարտացի է, Արմին-Ուրարտացիների Խալդի աստուծոյ պաշտած Արմին-հայրէն էին: Խալդին Հայկն էր, Բելի դէմ ապստամբած Հայկը: Այդ հայր որդուն կոչել էր Խալդի-տա, ինչպէս հայեր իրենց գաւակներին կոչում են՝ Հայ-կակ, Հայկ: Արմինայում Դարեհի դէմ ապստամբութիւնը, արմին-հայ Արախայի Բաբելոնի ապստամբութիւնը, նպատակ է ունեցել Արմինայի ինքնիշխանութիւնը վերականգնելու համար երկու տարբեր ճակատներով կռուել Դարեհի դէմ: Դարեհ դարձեալ ստիպուել էր գորք ուղարկել Արմինա, Բաբելոն, հրամայել նրանց՝ «Գնացէք զարկէք այն բազմութեանը, որը ապստամբել է իմ դէմ եւ չի ճանաչում ինձ: Արմինան, ապստամբական ծրագիրը յաջողացնելու համար Բաբելոն էր ուղարկել բարձր հեղինակութեան տէր, արեւ ի Արա աստուծոյ սերունդից, Արմինա-Ուրարտական Խալդիի շառաւիղ՝ «Ար-ախա, Արաեան» Արախային: Նրա աստուածային ծագում համարէր, որ Բաբելոնցիները նրան ընդունել էին որպէս Նաբուգոդոնոսոր թագաւոր: Դարեհի դէմ ապստամբած արմէնները, Խալդիին պաշտամունք նուիրած արմէններն էին: Եթէ երկիր ներխուժած օտար փոքրամասնութիւն լինէին, չէին ապստամբի աւելի նպատակ ունենալու գտնուող Դարեհի տիրապետութեան դէմ: Արմինայի արմէններն էին ապստամբութիւն ձեռնարկել եւ ոչ թէ օտարի օգնութեամբ իշխանութիւն եկած մարդիկ: Ուրարտու երկիրն է արմէն հայերի: «Ուրարտու» Արմանի (Արմինա-Արմէնիա) աշխարհակալ նոյն պետութեանը հոմանիշ անուններն են:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax : -----

C. & E. MERDINIAN ARMENIAN EVANGELICAL SCHOOL
Preschool through Middle School (8th Grade)

Շ. եւ Է. Մերտինեան Հայ Աւետարանական Վարժարան
Մանկապարտէս ֆիլեյէ Միջնակարգ 8-րդ դասարան

OPEN HOUSE
Saturday, February 25, 2012
10:00 A.M. – 12:00 NOON

- Academic excellence
- Developing character
- A loving and caring school environment
- Spiritual and moral enrichment
- Small class sizes
- WASC accredited
- Affordable tuition fees

For more information, please contact the school's office at (818) 907-8149
8:00 a.m. – 4:00 p.m.
13330 Riverside Drive, Sherman Oaks, CA 91423
www.merdinianschool.com

ՕՅ

- Ուսումնական բարձր մակարդակ
- Հայեցի դաստիարակութիւն
- Քրիստոնէական կրթութիւն
- Փոքր դասարաններ
- Վարկադրուած WASC-ի կողմէ
- Թարմար կրթաբաժնակի սակեր

Տեղեկութեանց համար հեռաձայնե՛ք (818) 907-8149
Կամ անձամբ ներկայանալ գրասենեակ, կ.ա. 8:00 – կ.ե. 4:00

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԵՐԻԱԼՆԵՐԸ ԵՒ ՆԵՐԿԱՅ ԿԵԱՆՔԸ

ԿՈՒԼԻԱ ՏԵՐ ԹՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Անառարկելի է այն երեւոյթը, որ վերջին տարիներին, հայկական սերիալները կարողացել են ներթափանցել Հայաստանի եւ Սփիւռքի հայ հասարակութեան կեանքի մէջ, դարձել նրանց «պարապ վախտի խաղալիքը», երբեմն էլ՝ ոչ պարապ վախտի: Դեռ աւելին, քաղաքական կամ օրուայ վիճաբարոյց ինդիւիդուալները չեն հայկական սերիալները առատ նիւթ են մատակարարում ընտանեկան կամ ընկերական մտերմիկ հաւաքներին ու նույնիսկ գործնական հանդիպումներին, ընդ որում, մտքերի բուռն փոխանակութիւն է ծաւալում ոչ միայն սերիալների դէպքերի ընթացքի աչիւն դէմքերի ու նրանց ունեցած ինտիմ կեանքի մասին:

Հետաքրքիր է նաեւ այն երեւոյթը, որ, սերիալների մասին արտայայտուած կարծիքները, առհասարակ, քննադատական են, շատ քչերն ունեն լրիւ դրական մօտեցում, բայց դրանով հանդերձ, ճիշտ ժամին, բոլորն անխտիր՝ թեր, թէ դէմ, մեխուած հեռուստացոյցի առջեւ՝ դիտում են հերթական սերիան, լարում են, ուրախանում, տիրում, երբեմն արտասոււմ եւ դժգոհ փնթփնթում, երբ գովազդ է յայտնւում էկրանին:

Հարց է առաջանում, սերիալների նկատմամբ աճող հետաքրքրութիւնն ի՞նչ ազդեցութիւն կունենայ մեր հասարակութեան մշակութային կեանքի ձեւաւորման վրայ: Ո՞վ կը շահի, կամ ո՞վ կը լինի տուժող կողմը՝ հի՞ն, թէ՞ նոր սերունդը. միայն ասել, որ պարզապէս սերիալները վատ են կամ ունեն բացասական ազդեցութիւն, ճիշտ է: Հէնց այն փաստը, որ հեռուստադիտողների քանակը մեծապէս գերազանցում է ընթերցանութեամբ զբաղուողների քանակին, դա շատ բան է ասում: Սա է, որ կայ: Պէտք է ընդունել, որ հիմնովին փոխուել են 21-րդ դարի մարդու նախասիրութիւնները: Գիրքը, գրականութիւնը եւ իսկական արուեստի միւս ճիւղերը եթէ

չեն մղուել յետին պլան, ապա նախկինի պէս առջեւում էլ չեն: Դա աւելի յատկանշական է երիտասարդ սերնդի մօտ. իրօք շատ բան է փոխուել, սկսած հագուկապից, վերջացած էլեկտրոնային նորագոյն սարքաւորումներով:

Ոմանք, հեռուստատեսութեան ծրագրերը համարելով հասարակութեան «գլուխը խառնելու» եւ ժողովուրդներին կառավարելի դարձնելու միջոց՝ ստեղծուած «տիւր» իրավիճակի համար մեղադրում են պետութիւններին. «Կառավարութեան վերեւի անդամները ո՞ր ոլորտի նկատմամբ հետաքրքրութիւն ունեն, դա էլ ծաղկում է,- գրում է իմ բարեկամուհի՝ Արմինէ Պետրոսեանը Քեւաւուից (տես <http://armgrak.info/node/14>),- իսկ գրականութիւնը «մոդայիկ» է, որովհետեւ ոչ բոլորն են կարողանում հասկանալ, ըմբռնել իսկական արուեստի գործերը, դրա համար էլ աւելի լաւ է միջակութիւն քարոզել, սերիալներով ու անիմաստ հեռուստաքարտերով յագեցնել հեռուստատեսութեւրը, որ հայ մարդու միտքը տարուի միայն սիրելի սերիալի սիրելի հերոսի ապրումներով, որ մոռանայ իր տնտեսական ու քաղաքական վիճակը, որ դառնայ ցածր ճաշակի, նեղ աշխարհայեացքի ու տարօրինակ լեզուամտածողութեան կրող: Սերիալներ, ռաբիա, ժամանցային թեթեւ ծրագրեր ամէն տեղ էլ կան ու որոշակիօրէն պէտք են մարդուն, որպէսզի մի փոքր ցրուի, բայց ոչ այնքան, որ նոյնիսկ առաջինն համարուող, մեր երկիրը աշխարհին ներկայացնող հեռուստալիքով օրուայ մէջ երեք անգամ կրկնեն նոյն ցածրաճաշակութիւնը, որ բոլորը «ի վիճակի լինեն» տեսնել...»:

Այնուամենայնիւ, թուում է, թէ սնկի պէս աճող հայկական հեռուստասերիալների դէպքում պետական «պատուէր»-ից աւելի՝ զօրեղ լծակ են մեր օրերի մարդու «մոդայիկ» պահանջները եւ այն կախարդական արկղը, որ կոչւում է՝ հեռուստացոյց:

ՏԵՐՈՒ ՄԻ ՓԱՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ՓԱԿՈՒՄ Է ԻՍԼ. ԱԶԱՏ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱՅՈՑ ԼԵԶԻԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԲԻՈՆԸ

ՔԱՐՄԷՆ ԱԶԱՐԵԱՆ

Շուրջ 15 տարի է, ինչ թեհրանի իսլամական Ազատ համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում բացուել է հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնը: Ամբիոն, որն այսքան տարի զանազան դժուարութիւններով հանդերձ, եւ ամէն տարի քանի տասնեակ, սկզբում նոյնիսկ 100-ից աւել հայ եւ պարսիկ հայերէնագէտներ դաստիարակելով, ցաւօք այսօր կանգնած է փակման տիւր փաստի առջեւ: Չգիտես ում եւ ինչ ասես, որ քեզ կրկնած չլինես: Վերջին շրջանում ում եւ ուր, որ պէտք էր, զգուշացրել ենք այս մասին եւ օգնութիւն խնդրել: Այս մասին "Յոյս"-ում էլ գրեցինք՝ յուսարով, որ ողջ համայնքը քայլեր կը

ձեռնարկի հայագիտական այս միակ ակադեմիական կենտրոնը թեհրանում պահպանելու համար: Ցաւում ենք, որ դարձեալ ձայն բարբառոյ յանապատի: Այնուամենայնիւ, երեսնով մեր համայնքի իսկ շահից, աւելորդ չենք համարում մէկ անգամ եւս բարձրաձայնել մեր մտահոգութիւնը:

Այո, կրկնում եւ կրկնում ենք, ով հայ ժողովուրդ, մենք ունենք հայերէնագիտական պաշտօնական համալսարան, որը հակառակ նրա դասախօսական կազմի, յատկապէս դոկտ.Անդրանիկ Սիմոնեանի բոլոր ջանքերի, արդէն գրկուել է ուսանողութիւնից եւ փակոււմ է: Այս կապակցութեամբ զանազան առիթներով խօսուել է թէ մեր ազգային մարմինների եւ թէ պետական պատասխանատու անձանց հետ, բայց իզուր: Վերջին քանի տարիների ընթացքում, երբ ընդունուող ուսանողների թիւը 10-ից չէր անցնում, նման օրին համեմատ այնքան էլ անսպասելի չէր: Տեղն էր՝ հենց այդ ընթացքում, գոնէ ազգային մար-

միւնների

կողմից աւելի լուրջ ու գործնական քայլեր ձեռնարկուէին, որպէսզի վառ պահուէր այս բարձրագոյն կրթական բացառիկ օջախը: Պէտք է դպրոցներում յատկապէս միջնակարգ օղակում քարոզչութիւն տարուէր այդ մասին եւ չբաւարարուէին միայն ուսուցիչ դիմորդներ ուղարկելով, որոնց թիւը խիստ սահմանափակ էր: Կարեւորը աշակերտութիւնն էր՝ մեր երիտասարդութիւնը, որոնք մեծ մասամբ անտեղեակ են նման մի կենտրոնի գոյութեան մասին, եւ երբ պատահաբար լսում են զարմացած ասում են «Մի՞թէ այդպիսի համալսարան էլ կայ»:

Ինչպէս տեղեկացանք, վերջին շրջանում թէ՛ թշտ առաջնորդի՝ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանի եւ թէ՛ Իսլ. Խորհրդարանում հայ պատգամաւորների՝ Գէորգ Վարդանի եւ Ռոբերտ Բեգլարեանի կողմից այս համալսարանի դեկավարութեանն ուղղուած նամակներ են յղուել՝ շեշտելով այս կենտրոնի գոյութեան կարեւորութիւնը եւ նրա գործունէութեան շարունակման անհրաժեշտութիւնը: Սակայն հայ-իրանական քաղաքատնտեսական ու մշակութային օրաւուր զարգացող յարաբերութիւններով եւ կնքուող իրարայայ շորդ պայմանագրերով հանդերձ, փաստօրէն հայերէնագիտական այս միակ ամբիոնը թեհրանում է:

Վերջնականապէս փակոււմ է: Ներկայ պայմաններում մեզ մնում է յուսալ եւ ոչ մի ջանք չխնայել: Եթէ մի դպրոցի փակման համար այդքան ցաւում ենք ու բողոքում, հապա ինչո՞վ կարելի է բացատրել այս անտարբերութիւնն ու լուրթիւնը՝ հայոց լեզուի եւ գրականութեան բարձրագոյն այս օղակի կորստի վերաբերեալ:

DOWNLOAD NOW

MASSISPOST

Available on the **Android Market**

Available on the **App Store**

massispost.com
daily news updates

The Burbank-Glendale-Pasadena Airport Authority

Presents Project:
REQUEST FOR QUALIFICATIONS/PROPOSAL - SPECIAL INSPECTIONS & MATERIALS TESTING PROJECTS E11-28, E11-29, E11-30 (not federally funded)

Services to be contracted:
Special Inspections and Materials Testing

OUTREACH EVENT (mandatory)
 Meeting Date & Time:
FEBRUARY 15, 2012, 2:00 P.M.

Outreach Event Purpose:
 Promote diversity, create opportunities for Disadvantaged Business Enterprises (DBE's)

Outreach Event Location:
 Bob Hope Airport, Terminal A: Skyroom, 2nd Floor
 2627 Hollywood Way, Burbank CA 91505
 Please park in the short-term parking structure on the rooftop level only. Bring your ticket for validation. We do not validate Valet Parking.

SOQ/P – SUBMITTAL DEADLINE
 March 9, 2012, 5:00 P.M.

Project Types & Description:
 New Construction: Intermodal Transportation Center, Consolidated Rental Car Facility, Concrete Parking Structure, Elevated Walkway with Moving Sidewalks

RFQ/P is available on the Bob Hope Airport's website at: www.bobhopeairport.com
 Hyperlink:
 Business Opportunities

125 ՏԱՐԵԿԱՆ ԴԱՍԱՏՈՒ ՄԱՅՐԸ ԴՆՉԱԿԸ

Շարունակում է 6-էն

րապետին: Այս մէկ իրողութիւնն ալ պիտի կոչեմ հարուած թիւ հինգ: Ու պատահեցաւ այնպէս, որ աջն (դրամատիրութիւնը) ու ձախը (Սովետ Միութիւնը) միացան երկուքի հասարակաց թշնամի՝ ցեղապաշտ շիթլէրի եւ Նացիզմի դէմ, եւ Համաշխարհային Բ. Պատերազմի աւարտին, 1945-ին, մարդկութիւնը մէկդի դրաւ ազգամիաս ազգաբարապաշտութիւնը եւ որդեգրեց մարդկային եղբայրակցութիւնը: Այսպիսի «հանդուրժողական» միջոցառումը մէջ էր որ կազմակերպուեցաւ սփիւռքահայուն դէպի հայրենիք Ներգաղթը (1947): Միջին Արեւելքէն տասնեակ հազարաւոր հայեր, որոնց մէջ մեծ թիւով Հնչակեան ընտանիքներ, հայրենիք ուղղուեցան իրենց ազգային եւ հայրենասիրական ձայնին անսալով: Գոթաբարապետը, սակայն, սփիւռքը ձգող եւ հայրենիք հաստատուող Հնչակ գանգուածները հեղուեցան Սովետ «ընկերներու» կողմէ, եւ շատ անգամ ալ հալածուեցան. եւ անոնց մէջ ամենէն ազգայինն ու ընկերավարականը, պատժուեցաւ դէպի Սիպերիոյ խորքերը աքսորուելով: Սփիւռքի Հնչակը հիասթափուեցաւ հայրենագաղթ Հնչակի հալածուելը իմանալով եւ յուսալքուեցաւ: Այս իրողութիւնն ալ եղաւ Հնչակը տակաւ տկարացնող հարուած թիւ վեց:

Հասարակաց թշնամիի (Նացիզմի) դէմ կնքուած կեղծ սիրերգութիւնը Դրամատիրութեան (Արեւմուտք) եւ համայնավարութեան (Արեւելք) միջեւ անշուշտ երկար չէր կրնար տեւել եւ չտեւեց, եւ վերջ գտաւ 1947-ին, նոր պատերազմի մը սկիզբով, որ կոչուեցաւ «Պաղ Պատերազմ»: Միջին Արեւելքի նորանկախ պետութիւններու մէջ ապրող մեծ մասամբ անուս, աղքատ եւ դիւրապէս օգտագործելի մեր Սփիւռքահայ ժողովուրդը, տեղացի Արաբ ազատատենչ բայց խեղճուկրակ ժողովուրդներուն հետ միասին, դարձաւ գոհն ու խաղալիքը Արեւմուտքի եւ Արեւելքի դաւադրութիւններուն: Գաղութատիրութեան եւ անոր գործակից Դրամատիրութեան դէմ Արաբ ազգայիններու պայքարը շեշտակիօրէն սուր դարձաւ 1948-ին, Իսրայէլ պետութեան հռչակումով, եւ սաստկացաւ Եգիպտոսի մէջ Յուլիս 23, 1953-ի յեղափոխութեամբ, որ Արաբ Ազգային Միութիւն կազմելու առաջատար շարժում դարձաւ, Կամալ Ապրըլ-Նասէրի ազգային խռովայոյց ճառերով: Արաբական աշխարհը ցոյցերով եւ ապստամբութիւններով բռնկեցաւ, եւ Արեւելքի նեցուկը վաչելով Նասէրականներ հակադրուեցան Արեւմուտքի նեցուկը վաչելով Արաբ նախագահներու եւ թագաւորներու դէմ: Ահա այսպիսի միջոցառումը մէջ էր որ Հայ Եկեղեցւոյ պառակտում տեղի ունեցաւ (էջմիածնական-Անթիլիասական՝ 1955-ին), եւ եղբայրասպան կռիւ

պատահեցաւ (1958-1960): Հնչակը այս պարագային ալ եղաւ, ինչպէս միշտ, Դրամատէր Արեւմուտքի շահերը ապահովող իշխանութիւններուն դէմ, եւ ազատատենչ ժողովուրդներու կամքն ու փափաքը հետապնդող ուժերուն հետ: Անշուշտ, իշխանաւորին հետ եղողը կ'օգտուի եւ կը վարձատրուի անոր կողմէ, եւ բնական է որ անոր դէմ եղողն ալ կորսնցնէ եւ գրկուի շատ բաներէ: Այս մէկ իրողութիւնն ալ պիտի կոչեմ Հնչակի զգալի եւ զանգուածային սփիւռքեան ներկայութեան դէմ հարուած թիւ եօթ: Եւ Սփիւռքահայութեան սիրտ կոչուող Լիբանանահայութեան կեանքին մէջ պատահեցաւ համբուրելի անկիւնադարձային դէպք եւ իրողութիւն: Հայկական Յեղասպանութեան Յիսնամեակի տօնակատարութիւնը, Ապրիլ 24 1965-ին, Պէյրութի Քամիլ Շամուն կոչուող մարզականին մէջ, հարիւր հազար հաշուող մեր ժողովուրդի ներկայութեան, Հայ ազգային երեք քաղաքական կուսակցութիւններն (Հնչակ եւ Դաշնակ եւ Ռամկավար) ու Հայ հաւատքի երեք (Առաքելական եւ Կաթողիկէ եւ Աւետարանական) համայնքները, նախապէս երեք չտեսնուած միասնակամ գործակցութեամբ ու եղբայրակցութեամբ, նոր էջ բացին մեր սփիւռքահայ կեանքին մէջ: Ատեղութիւնը եւ ինքնասիրութիւնը (Chauvinism) փոխարինուեցան փոխադարձ յարգանքի եւ հանդուրժողութեան զգացումներով: Ուսեալ եւ համբուրելի երիտասարդութիւն մը ձեռք առաւ սփիւռքահայ մեր կեանքի դասաւորումը, եւ ներքին ազգամիաս պայքարի փոխարէն ընտրեց պայքար Հայ Դատի եւ ստեղծեց գործակցութեան ոգի ու միջոցառում:

Ահա այսպիսի գործակցութեան (1965-1975) արդիւնքն էր «դրական չէզոքութիւնը» մեր հայ համայնքին, որ Լիբանանի քաղաքացիական պատերազմի (1975-1990) հնոցին մէջ այրելու վիճակէն ազատեց մեր ժողովուրդը այնտեղ: Յետոյ, երբ Պաղ Պատերազմը վերջ գտաւ Սովետ Միութեան կազմալուծումով (1990), ու երբ Հայաստանի Երրորդ Հանրապետութիւն հռչակուեցաւ (1991), Եօթնամյա հարուած կերած Հնչակը, որ նախապէս միշտ հայրենիքի կողքին եղած էր Դաշնակ թէ Սովետ գոյներու տակ, այս անգամ եւս եւ հաւատարիմ իր ազգային ականդրական դիրքորոշումին, կեցաւ նորագոյն Հայաստանի կողքին, եւ լուրջութեամբ ընկալեց վերարժեւորումը սփիւռքի մէջ ատենօք խնդրահարոյց ու վիճելի (Contentious) Երագոյնին ու Մայիս 28-ին:

1991էն ետք, սփիւռքահայութիւնը, Տէր Պետրոսեանի, Քոչարեանի եւ ներկայ նախագահ Սարգիսեանի թեր կամ դէմ դիրքորոշուեցաւ, բայց երբեք իր նորանկախ պետութեան դէմ ներքին պայքար ու ճակատ չբացաւ, եւ որեւէ ատենէ աւելի եղբայրաբար գործեց ու

ապրեցաւ: Բռնատիրութեան, Գաղութատիրութեան եւ Դրամատիրութեան դէմ պայքարի անվեհեր զինուոր եւ անշեղ գաղաբարի ուսուցիչ Հնչակը, իր 125 տարուայ հսկայ եւ հարուստ աւանդով ու փորձառութեամբ, կանգնած է այսօր հայ ազգի եւ հայրենիքի փրկութեան գետի ափին, եւ կը սպասէ Հայաստանի մէջ ազգային առողջ գիտակցութեան թիավարումը դէպի Սոցիալ Դեմոկրատ ապրելաձեւի կողմը, որպէսզի կորչի օլիգարքներու անգութ իշխանութիւնը, եւ հոն տիրէ Հիւսիս-Արեւմտեան Եւրոպայի մարդօգուտ եւ ծառայատէր Ընկերավարութիւնը, վերարժեւորելով Հնչակեան Սոցիալ Դեմոկրատ գաղաբարաբանութիւնը: Կուգայ ժամանակ, երբ ազատ ու անկախ մեր հայրենի ժողովուրդը կը զգայ որ ազատ ու անկախ են միայն այն քիչերը որոնք հայրենիքը կը կողոպտեն, եւ կը զգայ նաեւ, թէ ներկայ ծայրայեղ եւ անսանձ (Սովետ Միութեան վտանգի վերացումով) դրամատիրութիւնը հայ ձեռնոցներ հագած, կ'իւրացնէ մեր ժողովուրդի շահերը, եւ կը խանգարէ անոր գործի ապահովութիւնն ու հանգիստը: 125 տարեկան դասատու է Հնչակը:

Հնչակեան դպրոցի առաջին շրջանաւարտներն էին անոնք որոնք Կովկասի մէջ Հայ Յեղափոխականների Դաշնակցութիւնը կարգաւորեցին ու կազմեցին որպէսզի արեւելահայն ու արեւմտահայը միա-

սին պայքարին հայրենակերտումի գործին մէջ: Հնչակեան գոյներ հազող ազատատենչ հայ քաջ ու գիտակից երիտասարդներ էին անոնք որոնք «տուր ձեռքը ընկեր» երգելով քալեցին դէպի մահ, արհամարհելով բանտ, աքսորանք ու կախաղան: Հնչակեան դպրոցին մէջ էր որ հայը ստրվեցաւ թշնամին բարեկամէն զանազանել եւ կեղծ բարեկամութիւններով չօրորուիլ ու չխաբուիլ: Հնչակեան դպրոցին մէջ էր որ հայը մերժեց ազգայնամով վնասաբեր շարժումներու եւ կամ կուսակցական խմբաւորումներուն հետ դաշնակից դառնալ: Հնչակեան դպրոցին մէջ էր որ հայը ամէն տեղ եւ ամէնքին հետ ազգային ազատագրական պայքարի ընկեր դարձաւ: Հնչակեան դպրոցին մէջ էր որ հայը ստրվեցաւ ազգային շահերը գերադասել իր սեփական կուսակցական շահերէն վեր, եւ ստրվեցաւ հայրենիքի շահերը ամէն ինչէ վեր գերադասել: 125 տարեկան մայր է Հնչակը: Անոր մայրութիւնը կը նմանի մայրութեանը բնութեան որ եղանակներէ կ'անցնի, ամուսն կը ծաղկի եւ ձմուսն կը սառի, բայց երբեք չմեռնիր, ու կը շարունակէ եղանակէ եղանակ վերանորոգուիլ եւ վերածաղկիլ: Անոր մայրութիւնը կը զուգաւորուի Արարատի հայրութեան հետ եւ երկուքի պսակը կ'արդիւնաւորուի հայրենիքի եւ հայ ազգի յաւերժութեան հետ:

ՀՆՉԱԿԵԱՆ ՄՏԱԻՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ «ԵՓՐԱՏ ԳՈՒԼԵՃ»

Շարունակում է 6-էն

մրրկուած սրտով երբ կը մտաբերենք մեր ընդունակ ընկերներու հարիւրներուն չբացումը, մեր հոգիները կը խռովին ու կը փոշիանան: Թրքական վայրագութեանց զոհերն են անոնք. զինուոր առնուած ու ապա մորթուած:

Այսու, կը խոնարհինք իրենց յիշատակին առջեւ եւ կը համբուրենք անոնց յայտնի ու անյայտ շիրիմները սառ ... :

Հնչակեան Մտաւորականութեան բերած ներդրումը մեր գաղափարական պատմութեան կը մնայ անզուգական եւ ահաւասիկ այսպիսի պատմական փաստեր կուգան մեր յիշողութիւնները թարմացնելու, վերալիցքաւորելով եւ առաւել ամրապնդելով եւ հպարտացնելով մեզ:

INVITATION FOR BIDS (IFB) NO. 1715-A THE RE-PIPING OF (105) BUILDINGS AT RAMONA GARDENS

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit firm fixed price bids for the Re-Piping Of (105) Buildings at Ramona Gardens. Copies of the IFB may be downloaded from the internet at www.hacla.org/cgs Bids will be accepted by the General Services Department at 2600 Wilshire Blvd., 4th Floor, Los Angeles, CA 90057, until 2:00 P.M., Pacific Daylight Saving Time, March 6, 2012.

2/9, 2/16/12
CNS-2250981#
MASSIS WEEKLY

Անցեալի ահի ու սարսափի օրերուն մեր հաւատաւոր ընկերներու հինները գոյատեւած են իրենց սուրբ գաղափարի, Հնչակեանութեան անմար ճրագով եւ աներկիւղ ոգիով՝ որ անոնց պարգեւած էր սրտի ու մտքի մեծ հանգստութիւն:

Այսօր ալ, ահաւասիկ, 125 տարիներ ետք, բոլոր իրադարձութիւններու եւ տարբեր խոչընդոտներու առջեւ, մենք ալ նոյնպէս կը գոյատեւենք մեզի փոխանցուած ժառանգի եւ այդ հզօր գաղափարախօսութեան՝ մեր երակներուն մէջ ջամբած անկեղծ եւ ճշմարիտ վստահութեամբ եւ սիրով:

Կեցցէ՛ Ս.Դ. Հնչակեան Կուսակցութիւնը եւ անոր 125 տարիներու անսակարկ նուիրումը Հայ ժողովուրդին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:

G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

«ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան

Ժամը 10:00-ից 12:30

Կլէնտելի 380-րդ կայանից

www.massisweekly.com
updated every Friday

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՏԵՍԱԿԱՆԸ

Շարունակում է 2-ին

րը չեն պատժուել: Ձանազան քաղաքական գործիչներ, յատկապես նրանք, ովքեր պահպանեցին իշխանութիւնը, թուրքերի նման կրկնում են, որ չի կարելի թոյլ տալ նոր «Մարտի մէկ»: Հնչում է որպէս նախազգուշացում: Բաց տեքտով ասում են. «Ձեզ խելօ՞ք պահէք, թէ չէ...»:

6) Իշխանութեանն այսօր թուում է, որ եւրոկառուցների լուծութիւնն ապահովելով՝ լուեցրել է ՀՀ քաղաքացիներին: Սրանց թուում է, թէ Մարտի մէկից մնացել է միայն հասարակութեան վախը: Իսկ վախը իշխանութիւնը պահելու միջոցներից մէկն է:

Ուրեմն հիմա հերթը հասաւ հասարակութեանը: Մարտի մէկը

ոչ միայն քաղաքական, ոչ միայն ազգային անվտանգութեան ու սահմանադրական կարգի խնդիր է, այլև հասարակական: Սա աւելի կարեւոր է այսօր, քան բնապահպանական բոլոր խնդիրները: Որպէս կանոն՝ պնդում ենք, որ մեր երկրում ծագած բոլոր հարցերի լուծումը քաղաքական է: Սակայն այս ալյանդակ «օրէնքի» դէմ նախ եւ առաջ պիտի ընդվուզի հասարակութիւնը՝ յանուն սեփական գաւակների, յանուն մեր բանակի անվտանգութեան: Մարտի մէկի ոճրագործների պատիժը պիտի պահանջի նախ եւ առաջ հասարակութիւնը, պիտի պահանջի ճիշտ այնպէս, ինչպէս պատիժ կը պահանջէր սերիական մարդասպանի համար:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ԱՐԱՔԱՆ ԾԱՏ Է ՏԵՍԵԼ, ԾԱՏ ԲԱՆ ԳԻՏԻ

Շարունակում է 7-ին

է յայտնել, որ Պաքուն կարող է ամերիկա-իրանեան պատերազմն օգտագործել հակամարտութեան կարգաւորման համար եւ այդ հարցում թուրքիան կը պաշտպանի Ատրպէյճանին:

Եթէ նոյնիսկ այս կարծիքները ենթադրութիւնների եւ կանխատեսումների դաշտից են, այդուհանդերձ, լուրջ տագնապներ եւ զգուշացումներ են պարունակում: Օսմանեան թուրքիան 20-րդ դարակցի Հայոց ցեղասպանութիւնն իրականացրեց՝ օգտուելով Առաջին համաշխարհային պատերազմի քաոսից: Բացառուած չէ, որ տարածաշրջանային անկայունութիւնը դրդի նրան ազդերիներ հետ նոյն ոճիրն իրականացնել այս անգամ էլ Ղարաբաղում: Եւ այս տարբերակը ֆանտաստիկայի ժանրից է: Ոչինչ չի փոխուել, պարզապէս նոր ջարդի առիթն է ուշանում: Կարելի է չկասկածել, որ աշխարհն այս անգամ էլ է լուելու, ձեւացնելու է, իբր, տարուած ամերիկա-իրանական պատերազմով, հայկական ողբերգութեան մասին չի լսելու չի տեսել: Եւ չես մահու իր բողոքի ձայնն է բարձրացնելու, երբ բանը բանից անցած կը լինի արդէն: Գուշակութիւններ պէտք չեն հարակը իր գիշերային երկներանգ լոյսերով, եւ Երեւանը, որն աստիճանաբար կորցնում է իր հմայքը, գեղեցիկ տեսարանները քողարկելով վերոյիշեալ բարձրացարկ շէնքերի ստուերներում:

Բազմաթիւ բնակելի բազմաշարի շէնքեր են կառուցուած արուարձաններում եւս, որոնք համարեա դատարկ են: Այդպիսի մի շէնք էլ կառուցել են քրոջս բնակած շէնքի մօտ, գովազնող սարքերը (air conditioning) տեղադրել են լուսամուտներին կից, բայց բնակարանները դատարկ են, քանի որ վարձերը հասու չեն ուտելու հացի դրամ չունեցողների համար, որոնց մի մասը ելք է գտնում երկրից հեռանալու, չնայած խանութները «տրաքում են» բազմատեսակ ապրանքների ու ուտելիքի լիութիւնից, եւ գներն էլ մրցում են Լոս Անճելոսի գների հետ: Միւս կողմից՝ Երեւանի բնակչութիւնը այնքան է նօսրացել, որ միգրացի վարձով տան պահանջ էլ չկայ:

Ես գնեցի խանութից մէկ կգ տաւարի անոսկոր միս, վճարեցի 6300 դրամ (10 տոլար): Բանջարեղէնի խանութի աշխատողի հետ զրուցեցի: Նա աշխատում է օրը 12 ժամ, որի համար ստանում է 2500 դրամ (մօտ 7 տոլար): Մի խօսքով թանկութիւնը գլուխն առած գնում

մոզուելու, որ այդպէս էլ լինելու է: Արդէն ինչքան ժամանակ հայկական կողմը ահազանգում է, որ Պաքուն պարբերաբար խախտում է սպառազինութեանը առնչուող միջազգային բոլոր հնարաւոր պայմանագրերը... Սակայն միջազգային հանրութեան աչքերը չեն տեսնում եւ ականջները չեն լսում, որովհետեւ չեն ուզում տեսնել ու լսել: Շահը չի թողնում՝ քաղաքական շահը, տնտեսական շահը...:

Եւ աւելի վատ է, որ համաշխարհային խլութեան միջոցով ստում մենք չենք ուզում լսել իրար եւ խորհրդարանական ընտրութիւններից նոյնիսկ շատ առաջ փորձում ենք թիմերի բաժանուէլ, ժողովրդին ոտքի հանել ոչ թէ հայրենիքը պաշտպանելու, այլ իշխանափոխութեան համար, մոռանալով, որ կամրջի վրայ ձիերին չեն փոխում, անտեսելով գերագոյնը՝ հայրենիքի պաշտպանութիւնը, որը միասնութեամբ է միայն հնարաւոր: Ահա թէ ինչու է անհանգիստ Արաքսը, ինչու են նրա պղտորուած ալիքները փորձում դուրս գալ ափերից: Արաքսը շատ է տեսել ու զգացել, մայր գետը շատ բան գիտի: Եւ եթէ փորձում է դուրս գալ ափերից, ուրեմն վտանգն իրական է ու մեզանից այնքան էլ հեռու չէ:

2011-ԵՐԵՒԱՆԵԱՆ ՕՐԵՐ

Շարունակում է 8-ին

էր շրջապատի անդորրը: Շէնքի բնակիչները այդ մասին յայտնում են պատգամաւորին: Վերջինս կազմակերպում ու նրանց միջոցով դատի է տալիս այդ օլիգարխին տուեալ կառուցն արգելելու նպատակով եւ դատի օրն էլ բնակիչներին դատարան է ուղեկցում տաքսիներով: Բնակիչները շահում են դատը, որից յետոյ մի խումբ սասունցիներ կազմակերպում ու Անդրանիկին նուիրուած բազայտէ քարից յուշարձան են կանգնեցնում այնտեղ, որպէսզի ապագայում որեւէ մէկը միտում չունենայ փողոցի

վարորդների հետ, հետաքրքրուելով նրանց աշխատանքով, որոնցից ստացայ տարբեր պատասխաններ: Մէկն ասաց, որ աշխատում է 12 ժամ եւ ստանում է 5-7 հազար դրամ, մի ուրիշն ստանում է նոյն դրամը, երբեմն՝ 10 հազար դրամ, երրորդն ստանում է հազար հինգ հարիւրից երկու հազար հինգ հարիւր դրամ, որին, իհարկէ, չհաւատացի: Ամէն դէպքում նրանց եկամուտները ցածր լինելով հանդերձ, դրանով ճգնում են պահել իրենց ընտանիքները: Իշխանութիւնների թոյլութեամբ Երեւանի կենտրոնի յուշակոթողի վերածուէլիք փողոցները, մայթերն ու յարակից



Բերմուդեան Եռանկիւնի

այդ մասում որեւէ կրպակ տեղադրելու մասին:

Իհարկէ չի կարելի չտեսնել որոշ առաջընթաց Հայաստանի, այդ թւում Երեւանի զարգացման գործում, որում զգալի դեր ունեն նաեւ սփիւռքահայ եւ օտարերկրեայ բարերարները: Ինձ բախտ վիճակուեց մի քանի անգամ տաքսիով երթեկեկել Երեւանի արուարձաններով եւ նկատեցի կառուցուած բաւական նոր ճանապարհներ ու կամուրջներ, կարծում եմ հիմնականում Քրք Քրք քրքերեանի ֆինանսական օգնութեամբ: Հաւանաբար Քրք Քրք քրքերեանը գոհ չէր իր նուիրած գումարներով կատարուած աշխատանքից, որի ապացոյցը Լինսի բարեգործական հիմնարկը փակելուց յետոյ, նրա այնտեղ եղած 200 միլիոն տոլարը Գալիֆորնիայի համալսարանին նուիրաբերում է: Քանի որ խօսք եղաւ տաքսիների մասին, նշեմ, որ ես զրուցեցի մի քանի տաքսու

հին շինութիւնների մեծ մասը տարիներ շարունակ քանդուած են ու նրանց տեղերը օլիգարխների կողմից երկնաքեր են կառուցուած: Այդ շէնքերը լրիւ աղաւղում են մայրաքաղաքի երբեմնի հրաշքային տեսքը, որով հիանում ու հպարտանում էր իւրաքանչիւր հայ, աշխարհի որ երկրից էլ այցելել Երեւան, որն իր գեղեցկութեամբ, մաքրութեամբ եւ այլ տուեալներով կարող էր մրցել եւրոպական ցանկացած քաղաքի հետ: Այդ աղաւղումները ես աւելի լաւ եմ զգում, երբ, լինելով Երեւանի վրացական փողոցում գտնուող հինգ յարկանի շէնքի 5-րդ յարկում բնակող քրոջս բնակարանում, դրա դէպի քաղաք նայող ամբողջ սենեակի պատով լուսամուտից երկար դիտում եմ ինձ կախարդող-դիւթող, առջեւ բացուող գեղեցիկ ու հմայիչ տեսարանը՝ Մասիան ու Արարատը, Արարատեան դաշտավայրը, հեռուստատեսային աշտա-

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
 1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104
 Գրասենեակները վերանորոգուած
 եւ յարմար վարձքերով
 Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
 (626) 398-0506

ArmenienInfo.net
 News. Informationen. Kommentare.



The Armenian Council of America cordially invites you to a welcoming reception for:

Congresswoman Judy Chu



Sunday March 4, 2012

From 4pm-6pm

A.E.B.U., 1060 N. Allen Ave. Pasadena

The event is free and open to the public

Light refreshments will be served

RSVP: Info@Armeniancouncil.org



**ԿԻԼԻԿԵԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
90 ԱՄԵԱԿԻ**

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ - ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հովանավորությամբ՝

ԳԵՐԾ. Տ. ՅՈՎԷՆԱՆ Ս. ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ
Առաջնորդ Արեւմտեան Թեմի

Նախագահությամբ՝

ԳԵՐԾ. Տ. ԱՐՄԱԾ Ս. ԵՊՍ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ
Առաջնորդ Դամասկոսի Թեմի
— Գեղարուեստական Յայտագիր —

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 11 2012, Կ. Ե. ԺԱՄԸ 3-ԻՆ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԳԱԼԱՅԾԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ
2235 N. Glenoaks Boulevard, Burbank



ՄՈՒՏՔԻ ԳԻՆ՝ \$50